



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ
ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ



ԵՐԵՎԱՆ 2017

Զեկույցը պատրաստվել է Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի¹ կողմից ֆինանսավորվող «Հայաստանում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում: Զեկույցում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները պատկանում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին և կարող են չհամընկնել ՄԱԿ ՓԳՀ-ի կամ դրա հայաստանյան գրասենյակի տեսակետների հետ:

¹ Այսուհետև՝ ՄԱԿ ՓԳՀ:

Բովանդակություն

Ներածություն.....	4
Մեթոդաբանություն.....	7
I. Ընդհանուր տեղեկություններ և վիճակագրական տվյալներ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձանց և ապաստան հայցողների վերաբերյալ.....	9
II. Փախստականների և ապաստան հայցողների իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության հիմնական զարգացումները և խնդիրները.....	15
III. Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովումը հատուկ հաստատություններում.....	29
IV. Ապաստան հայցողների իրավունքների ապահովումը Միգրացիոն պետական ծառայության որոշումների կայացման շրջանակներում.....	57

Ներածություն

Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովումը և գործնականում դրանց իրացման երաշխիքների ստեղծումը իրավական պետության սկզբունքներից է: Նշված կատեգորիայի անձանց իրավունքների պաշտպանությունը պահանջում է հատուկ ուշադրություն: Դա իր հերթին պայմանավորված է նրանով, որ որպես կանոն, փախստականներն ու ապաստան հայցող անձինք լիարժեք տեղեկացված չեն իրենց կարգավիճակից բխող իրավունքներին: Ուստի, տարբեր պետությունների և միջազգային կառույցների կողմից ընդունվել են փախստականների, ապաստան հայցողների և հարկադրաբար տեղահանված այլ անձանց իրավունքների պաշտպանությունը երաշխավորող տարբեր իրավական ակտեր:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածն ամրագրում է, որ *«Յուրաքանչյուր ոք ունի հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունք»*՝ սահմանելով անձի ապաստանի իրավունքը:

Ապաստանը և փախստականի կարգավիճակը միջազգային պաշտպանություն է, որը տրամադրվում է օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց՝ ազգային պաշտպանության փոխարեն, որը նրանք չունեն: Ստանալով փախստականի կարգավիճակ և բնակվելով այլ պետության տարածքում, այլ էթնիկ խմբերի հետ՝ փախստականները բախվում են խնդիրների, որոնք կապված են լեզվական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ իրավունքների իրացման հետ ու պետություններից պահանջում են առավելագույն միջոցներ: Միջազգային հանրության լիիրավ անդամ հանդիսացող և այդպիսին լինելու հավակնող յուրաքանչյուր պետություն ստանձնած պարտավորություններին համապատասխան պետք է ոչ միայն բացառի ապաստան հայցողների և փախստականների իրավունքների ոտնահարումը, այլև ստեղծի գործնականում լիարժեք կիրառելի իրավական երաշխիքներ՝ նրանց կողմից իրենց իրավունքները իրացնելու և հասարակության մեջ ինտեգրվելու համար:

Փախստականների իրավունքների պաշտպանության ռեժիմը կարևորում է իրենց երկիրը լքած անձանց անվտանգության ապահովումն այն սպառնալիքներից ու հետապնդումներից պաշտպանելը, որոնց պատճառով նրանք լքել են իրենց բնակավայրերը: Պաշտպանությունը, սակայն, միայն անվտանգություն չէ: Խոսքը վերաբերում է նաև իրավունքների և

ազատությունների այնպիսի ծավալի տրամադրմանը և դրանց իրականացման այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կապահովի անվտանգ ու բարեկեցիկ կյանք:

Համաձայն Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի և դրան կից 1967 թվականի արձանագրության՝ փախստականների պաշտպանությունը ներառում է, նախևառաջ, նրանց՝ ապաստանի երկիր մուտք գործելը և նրանց իրավունքների հետագա ապահովումը այդ երկրի կողմից, ներառյալ նրանց՝ իրենց ծագման կամ ցանկացած այլ երկիր վերադարձնելու արգելքի պահպանումն այն դեպքում, երբ տվյալ անձինք այդ երկրներում կարող են հետապնդվել կամ նրանց կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ: Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիային միացել է 1993 թվականի հուլիսի 6-ին:

Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանությունը երաշխավորվում է ինչպես մարդու իրավունքների ընդհանուր համատեքստում, այնպես էլ՝ փախստականների համար «հատուկ իրավունքներ» ամրագրելով, որոնք սահմանում են նրանց պաշտպանությունն ապահովող լրացուցիչ երաշխիքներ:

Ապաստան հայցողների և փախստականների իրավունքները կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝

- *իրավունքներ, որոնք փախստականները և ապաստան հայցող անձինք ունեն բնակության վայրի երկրում օրինական ճանապարհով գտնվող օտարերկրացիներին հավասար,*
- *իրավունքներ, որոնք փախստականները և ապաստան հայցող անձինք ունեն ապաստան տրամադրած երկրի քաղաքացիներին հավասար,*
- *փախստականների և ապաստան հայցող անձանց հատուկ իրավունքներ, որոնք բխում են միջազգային պաշտպանության մեխանիզմներից:*

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների և փախստականների հիմնախնդիրն առաջ եկավ հատկապես Խորհրդային միության փլուզումից հետո: 1988-ից 1992 թվականներին մոտ 500 հազար հայեր բռնի տեղահանվեցին Ադրբեջանի տարբեր բնակավայրերից, որոնցից մոտ 360 հազարը բնակություն հաստատեցին Հայաստանում: Անիրաժեշտություն առաջացավ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ

ներանց իրավունքների պաշտպանության, հատկապես քաղաքացիության հետ կապված հարցերը կարգավորելու համար:

Ինչպես նշվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի² 2016 թվականի տարեկան հաղորդման մեջ, Հայաստանի Հանրապետություն տեղահանված և փախստականների կարգավիճակ սրացած անձանց, ապաստան հայցողների և հարկադրաբար տեղահանված այլ անձանց հիմնական մասը Ադրբեջանից, Սիրիայից, Իրաքից, Իրանից, Աֆրիկյան պետություններից (Կոտ Դիվուար, Մալի, Կոնգո) և Ուկրաինայից են: 2016 թվականի ապրիլյան պատերազմից հետո տեղահանվածներ եղան նաև Արցախից³:

Հաշվի առնելով փախստականների և ապաստան հայցողների իրավունքներին առնչվող մարտահրավերները Պաշտպանը նախաձեռնել է համապատասխան ուսումնասիրություն, որի արդյունքները ներկայացված են սույն զեկույցում:

²Այսուհետև՝ Պաշտպան:

³Տե՛ս 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 308,

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf>:

Մեթոդաբանություն

Զեկույցի կազմման հիմքում ընկած են Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանն առնչվող ուսումնասիրությունները:

Քննարկման են առնվել Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին և փախստականի կարգավիճակ ստացած անձանց առնչվող պաշտոնական վիճակագրական տվյալները: Ուսումնասիրվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության⁴ ապաստանի դիմումների քանակի և ապաստան հայցող անձանց սեռի, տարիքային խմբերի, ինչպես նաև քաղաքացիության երկրների վերաբերյալ տեղեկությունները:

Քննարկվող ոլորտը հետազոտելու նպատակով առաջնային նշանակություն է տրվել օրենսդրության և գործնականում դրա կիրառման վերլուծությանը: Ուսումնասիրվել է փախստականների և ապաստան հայցողների իրավունքներին առնչվող ներպետական օրենսդրությունը, մասնավորապես, ՀՀ միջազգային պարտավորություններին դրա համապատասխանության տեսանկյունից: Առաջարկվել են օրենսդրական լուծումներ՝ իրավակիրառ պրակտիկան զարգացնելու և ոլորտի վերաբերյալ օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով:

Սույն զեկույցի մշակման շրջանակներում ուսումնասիրվել է նաև հատուկ հաստատություններում բնակվող կամ պահվող ապաստան հայցող անձանց և փախստականների իրավունքների ապահովման վիճակը: Մասնավորապես, իրականացվել է այց Միգրացիոն պետական ծառայության ենթակայությամբ գործող «Հատուկ կացարան» ՊՈԱԿ, որն ապահովում է ապաստան հայցողների ժամանակավոր կացությունը: Այցի ընթացքում ուսումնասիրման են ենթարկվել ապաստան հայցողների բնակության պայմանները, ինչպես նաև սննդի, բժշկական սպասարկման, սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանների առկայությունը և այլն:

Այցեր են իրականացվել նաև ՀՀ արդարադատության նախարարության այն քրեակատարողական հիմնարկներ, որտեղ կան ազատությունից զրկված փախստականներ կամ ապաստան հայցողներ: Այցերի ընթացքում

⁴ Այսուհետև՝ Միգրացիոն պետական ծառայություն:

ուսումնասիրվել են այդ անձանց կարգավիճակով, կրոնով և այլ հիմքերով պայմանավորված իրավունքների ապահովումը, ինչպես նաև նրանց բնակության պայմանները, բժշկական սպասարկումը և այլն:

Ուսումնասիրվել են նաև Միգրացիոն պետական ծառայության որոշումները՝ նպատակ հետապնդելով վերլուծելու դրանց հիմնավորվածությունը և ապաստանի ընթացակարգի շրջանակներում ապաստան հայցողների իրավունքների ապահովումը, ինչպես նաև որոշումների համապատասխանությունը ՀՀ միջազգային պարտավորություններին և ներպետական օրենսդրությանը:

I. Ընդհանուր տեղեկություններ և վիճակագրական տվյալներ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձանց և ապաստան հայցողների վերաբերյալ

ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնական տվյալներին համապատասխան՝ աշխարհում հարկադրաբար տեղահանված անձանց թիվը կազմում է 65.6 մլն, որից 22.5 մլն. փախստականի կարգավիճակ ստացած անձինք են, իսկ նրանց մոտավորապես հիսուն տոկոսը՝ 18 տարեկանից ցածր տարիք ունեցող⁵:

1990-ականների սկզբին Հայաստանը, լինելով նորանկախ պետություն, բախվել է բազմաթիվ խնդիրների, այդ թվում՝ հարկադրաբար տեղահանված անձանց զանգվածային ներհոսքի: Դրա վառ օրինակներից է 1988-ից 1992 թվականների ընթացքում Ադրբեջանից Հայաստանի Հանրապետության տարածք մեր հայրենակիցների տեղահանությունները և նրանց ապաստանի տրամադրումը: Միգրացիոն պետական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն՝ Ադրբեջանից Հայաստան են հարկադրաբար տեղահանվել առավել քան 360,000 ազգությամբ հայեր⁶:

Հատկանշական է, որ ՄԱԿ ՓԳՀ-ն 1992 թվականի դեկտեմբերին հաստատել է իր ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետությունում՝ աջակցելով Ադրբեջանից մեծ հոսքերով գաղթած ավելի քան 360,000 էթնիկ հայ փախստականների, ովքեր Հայաստան էին գաղթել Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով⁷:

Հաջորդ մեծ հոսքը դեպի մեր երկիր արձանագրվել է Իրաքի Հանրապետությունից 2004 թվականի վերջերից սկսած, երբ այնտեղ բնակվող մեծ թվով էթնիկ հայեր ժամանեցին Հայաստան⁸:

Սիրիական ճգնաժամը պատճառ հանդիսացավ Սիրիայի տարածքում տարիներ շարունակ բնակվող ազգությամբ հայերի համար ապաստան հայցելու Հայաստանի Հանրապետությունում: ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնական տվյալների համաձայն՝ 2011 թվականից ի վեր մոտ 5 միլիոն մարդ լքել է Սիրիան, իսկ

⁵Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ պաշտոնական կայքէջը, <http://www.unhcr.org/figures-at-a-glance.html>:

⁶Տե՛ս Միգրացիոն պետական ծառայության պաշտոնական կայքէջը, http://www.smsmta.am/?menu_id=93:

⁷Տե՛ս ՄԱԿ Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչության պաշտոնական կայքէջը, <http://www.un.am/hy/agency/UNHCR>:

⁸Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ պաշտոնական կայքէջը, <http://old.un.am/am/UNHCR>:

միլիոնավոր սիրիացիներ համարվում են ներքին տեղահանված⁹: ՀՀ սպյուռքի նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ Սիրիական ճգնաժամից մինչև 2015 թվականի առաջին կիսամյակը նրանց թիվը հասնում է 22,000-ի¹⁰: Միգրացիոն պետական ծառայության վիճակագրական տվյալները վկայում են, որ 2010 թվականից մինչև 2017 թվականի առաջին կիսամյակը ներառյալ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ են ստացել Սիրիայի Արաբական Հանրապետության 865 քաղաքացի: Խնդրի առկայությամբ պայմանավորված՝ մինչ օրս շարունակվում է սիրիացիների ներհոսքը հանրապետություն: «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանը Սիրիայից ամենաշատ փախստականներ ընդունած եվրոպական երրորդ երկիրն է՝ Գերմանիայից և Շվեդիայից հետո: Ավելին, Հայաստանն առաջին եվրոպական երկիրն է մեկ բնակչի դիմաց ընդունած սիրիացի փախստականների քանակով. 1000 քաղաքացու դիմաց՝ 6 անձ¹¹:

2016 թվականի ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սկսված արցախյան քառօրյա պատերազմի և Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրման արդյունքում՝ Արցախից Հայաստանի Հանրապետություն հարկադրաբար տեղափոխվեցին և ապաստան ստացան այնտեղ բնակվող մեծ թվով ազգությամբ հայեր: ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի տվյալներին համապատասխան՝ ապրիլյան ռազմական գործողությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն են փնտրել 2247 անձ (մոտավորապես 681 ընտանիք), որոնցից 1429-ը (411 ընտանիք) օգտվել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված դրամական աջակցությունից¹²:

Վերը նշված հիմնական ներհոսքերից զատ, Հայաստանի Հանրապետությունում ապաստան են հայցել և փախստականի կարգավիճակ

⁹Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ պաշտոնական կայքէջը, <http://www.unhcr.org/syria-emergency.html>:



¹⁰Տե՛ս Ադրինե Շիրինյանի՝ 2015թ. դեկտեմբերի Սիրիայի տեղահանված բնակչության ուսումնասիրության վերաբերյալ գնահատողական զեկույցը, http://www.un.am/up/library/Study_migration_syrians-2015.pdf:

¹¹Տե՛ս Հայաստանի եվրոպացի բարեկամների՝ 2015թ. հոկտեմբերի 15-ի «Եվրոպական արժեքներ և սիրիացիների զանգվածային տեղահանում. ԵՄ, Հայաստան և հարևան երկրների արձագանքը» զեկույցը, էջ 6, <http://eufoa.org/wp-content/uploads/2016/12/SyrianRefugees-1.pdf>:

¹²Տե՛ս ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչության պաշտոնական կայքէջը, <http://www.un.am/hy/agency/UNHCR>:

ստացել նաև այլ երկրների քաղաքացիներ, այդ թվում՝ Իրանից, Աֆրիկյան պետություններից (Կոտ Դիվուար, Մալի, Կոնգո), Ուկրաինայից և այլն:

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի կողմից արձանագրված տվյալներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի հունիսի դրությամբ ՄԱԿ ՓԳՀ մանդատի շրջանակներում մտահոգության առարկա հանդիսացող անձանց թիվը կազմել է 18,606¹³:




Սույն զեկույցի մշակման նպատակով ուսումնասիրվել են Միգրացիոն պետական ծառայության՝ 2014-ից 2017 թվականի սեպտեմբերն ընկած

¹³Տե՛ս ՄԱԿ Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչության պաշտոնական կայքէջը, <http://www.un.am/hy/agency/UNHCR>:


Ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին և փախստականի կարգավիճակ ստացած անձանց առնչվող վիճակագրական տվյալները:

Նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան են հայցել ընդհանուր առմամբ 757, իսկ փախստականի կարգավիճակ է ստացել 431 անձ¹⁴: Ընդգծման ենթակա է այն, որ հնարավոր է 2017 թվականի ընթացքում քննարկվեն և դրական կամ բացասական եզրահանգում ստանան նախորդ տարիների ընթացքում ստացված ապաստանի դիմումները, ինչպես նաև հնարավոր է, որ 2017 թվականի ընթացքում ստացված ապաստանի դիմումների քննարկումը տեղափոխվի 2018 թվական: Հետևաբար, ապաստանի դիմումների և փախստականի կարգավիճակի տրամադրման դեպքերի թվաքանակների միասնական վերլուծության իրականացումը՝ պարզելու համար դրանց հարաբերակցությունը, հնարավոր չէ:



¹⁴Տե՛ս Միգրացիոն պետական
[http://www.smsmta.am/?menu_id=151:](http://www.smsmta.am/?menu_id=151)


Տարեկան կտրվածքով վիճակագրական տվյալներ 2014 թվականից 2017 թվականի սեպտեմբեր Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձանց թվաքանակի վերաբերյալ ըստ երկրների




Ինչպես երևում է տարեկան կտրվածքով ապաստան հայցողների թվային տվյալներից՝ տարբեր տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներհոսքը եղել է հիմնականում այն երկրներից, որտեղ տվյալ ժամանակահատվածում պատերազմական իրավիճակ կամ մարդու իրավունքների զանգվածային խախտումներ են եղել: Օրինակ՝ 2014 թվականից 2017 թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց մեծամասնությունը եղել են Սիրիայից՝ ընդհանուր առմամբ 250 անձ: 2014 և 2015 թվականների ընթացքում մեծ է եղել Հայաստանում ապաստան հայցող Ուկրաինայի Հանրապետության քաղաքացիների թվաքանակը՝ 207 անձ:

Ստորև ներկայացվում են նաև վիճակագրական տվյալներ 2014 թվականից 2017 թվականի սեպտեմբեր Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց սեռի և տարիքի վերաբերյալ:

Վիճակագրական տվյալներ 2014 թվականից 2017 թվականի սեպտեմբեր Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց սեռի վերաբերյալ



Վիճակագրական տվյալներ 2014 թվականից 2017 թվականի սեպտեմբեր Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց տարիքի վերաբերյալ



Վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների քանակն ըստ սեռի գրեթե հավասար է եղել, իսկ չափահասների թիվը գերակշռում է:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին ներկայացված փաստաթղթում նշվում է, որ մինչև 2013 թվականը Հայաստանի Հանրապետությունում ապաստան է հայցել միայն մեկ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատ երեխա¹⁵:

¹⁵Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին ներկայացված հաշվետվությունը, էջ 6, <http://www.refworld.org/pdfid/54c0f9424.pdf>:

II. Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների և առնչվող ՀՀ օրենսդրության հիմնական զարգացումները և խնդիրները

Անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետությունը միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու համար վավերացրել է մի շարք միջազգային պայմանագրեր և պարտավորություն է ստանձնել կյանքի կոչելու դրանցով սահմանված դրույթները՝ համապատասխանեցնելով ներպետական օրենսդրությունը միջազգային պահանջներին: Այդ միջազգային պայմանագրերի թվին են դասվում նաև 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան¹⁶ և դրան կից 1967 թվականի Արձանագրությունը¹⁷:

Հայաստանի Հանրապետությունը 1993 թվականի հոկտեմբերի 4-ին միացավ Կոնվենցիային, իսկ նույն թվականի հուլիսի 6-ին՝ Արձանագրությանը: Հետագայում, ի լրումն ստանձնած միջազգային պարտավորությունների, 1999 թվականին ՀՀ ազգային ժողովն ընդունել է «Փախստականների մասին» ՀՀ օրենքը: Չնայած օրենքի ընդունումը բավականին առաջադիմական քայլ էր, այնուամենայնիվ, դրանում առկա էին դրույթներ, որոնք հետագա մշակման ու կատարելագործման կարիք ունեին: Այդ բացերը էական խոչընդոտներ էին ստեղծում ապաստան հայցողների և փախստականների իրավունքների լիակատար իրացման և գործնականում դրանց պաշտպանության համար: Ըստ այդմ էլ, 2008 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ ազգային ժողովն ընդունեց «Փախստականների և ապաստանի մասին» նոր օրենքը¹⁸, որն ուժի մեջ մտավ 2009 թվականի հունվարի 24-ին:

Օրենքի ընդունումը պայմանավորված էր փախստականների և ապաստան տրամադրելու հետ կապված խնդիրների լուծման նկատմամբ համակողմանի մոտեցում դրսևորելու և նախկին օրենքի կարգավորման շրջանակներից դուրս մնացած հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությամբ: Օրենքն ամրագրում է ապաստան հայցողների, փախստականների իրավական կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները, փախստականների պաշտպանության հիմնարար

¹⁶Այսուհետև՝ Կոնվենցիա:

¹⁷Այսուհետև՝ Արձանագրություն:

¹⁸Այսուհետև՝ Օրենք:

սկզբունքները՝ խտրականության արգելքը, չվերադարձնելու, ընտանիքի միասնությունը և վերամիավորումը, ՀՀ տարածք ապօրինի մուտք գործելու դեպքում քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսելը, առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահասների իրավական կարգավիճակը, ինչպես նաև ապաստանի հարցերով իրավասու պետական մարմինների լիազորությունների շրջանակը և այլն: Այնուամենայնիվ, առկա են որոշ բացթողումներ, որոնք կարող են խոչընդոտել ՀՀ տարածքում ապաստան հայցողների և փախստականների իրավունքների արդյունավետ իրացմանը: Այդ բացթողումները քննարկման առարկա են դարձել սույն զեկույցի հետագա շարադրանքում:

Անհրաժեշտ է առանձնացնել նաև փախստականների իրավունքների պաշտպանությունն ու ապաստանի տրամադրման գործընթացը կարգավորող հետևյալ իրավական ակտերը՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995 թվականի ՀՀ օրենքը, «Օտարերկրացիների մասին» 2007 թվականի ՀՀ օրենքը, «Քաղաքական ապաստանի մասին» 2001 թվականի ՀՀ օրենքը, «Պետական սահմանի մասին» 2001 թվականի ՀՀ օրենքը, «Սահմանապահ զորքերի մասին» 2001 թվականի ՀՀ օրենքը և այլն:

Անդրադառնալով ոլորտի օրենսդրական կարգավորումների զարգացմանը՝ հարկ է ընդգծել, որ 2015-ից 2016 թվականների ընթացքում կատարվել են օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված են եղել ապաստանի ընթացակարգի և փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտի իրավակարգավորումների կատարելագործմանը և դրանց համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին:

2015 թվականի Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ *«Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:* Սահմանադրության 54-րդ հոդվածի համաձայն՝ *«Քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան հայցելու իրավունք: Քաղաքական ապաստանի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով»:* Ավելին, 55-րդ հոդվածով սահմանվում է արտքսման կամ հանձնման արգելքը, որի 1-ին մասը սահմանում է, որ *«Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ փոխյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել*

մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:»:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով ամրագրված են այնպիսի կարգավորումներ, ինչպիսիք են՝ դրամական օգնության տրամադրման նախատեսումը նաև այն ապաստան հայցողներին, ովքեր չեն բնակվում ժամանակավոր տեղավորման կենտրոնում: Օրենքով ամրագրվել է ապաստան հայցողների ու փախստականների անվճար իրավաբանական օգնության իրավունքը:

ՀՀ ազգային ժողովը 2016 թվականի հոկտեմբերի 17-ին ընդունել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն՝ անվճար իրավաբանական օգնության իրավունք են ստացել նաև ապաստան հայցող անձինք: Մասնավորապես, ներկայիս կարգավորմամբ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետի սահմանում է, որ «*Հանրային պաշտպանի գրասենյակը, բացառությամբ քրեական գործով կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելու, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի, փախստականներին տրամադրում է սույն հոդվածով նախատեսված անվճար իրավաբանական օգնություն:*»:

Նախատեսվել է ազատազրկման վայրերի վարչակազմին՝ ապաստանի հայցեր ընդունելու և դրանք Միգրացիոն պետական ծառայությանը փոխանցելու պարտավորություն: Մասնավորապես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*Ուղղիչ հիմնարկում պահվող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող դատապարտյալն իրավունք ունի պարիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմին «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում ապաստանի խնդրանք, որը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով պարիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի կողմից ենթակա է փոխանցման միգրացիայի հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին:*»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ «*Օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը*

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում ապաստանի խնդրանք ներկայացնելու իրավունք ունի, որը համապատասխան վարչակազմի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ենթակա է փոխանցման միգրացիայի հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին:»:

Ավելին, ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության Սահմանապահ գործերի, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կամ ազատագրկման վայրերի վարչակազմի կողմից ապաստանի խնդրանքի ընդունման և այն լիազոր մարմնին փոխանցելու կարգը սահմանելու մասին» թիվ 1147-Ն որոշմամբ կարգավորվում են նշված մարմինների կողմից ապաստանի հայցերն ընդունելու և դրանք Միգրացիոն պետական ծառայությանը փոխանցելու հետ կապված հարաբերությունները:

ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի «ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1440-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 1268-Ն որոշմամբ սահմանվում է առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա ապաստան հայցողի՝ ժամանակավոր տեղավորման կենտրոնում առաջնահերթության կարգով տեղավորելու երաշխիքը, իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 3-ի «Ապաստանի ընթացակարգի շրջանակներում ներկայացուցիչ նշանակելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 239-Ն որոշմամբ սահմանվում են հատուկ կարիք ունեցող ապաստան հայցողների համար ապաստանի ընթացակարգի շրջանակներում ներկայացուցիչ նշանակելու կարգն ու պայմանները:

Չնայած փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանն առնչվող օրենսդրության զարգացումներին, ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնք պահանջում են օրենսդրական լուծումներ:

Մասնավորապես, Օրենքի 9-րդ հոդված 1-ին մասով սահմանվում է չվերադարձելիության սկզբունքը, ըստ որի *արգելվում է փախստականին որևէ կերպ վերադարձնել այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վրանգ սպառնալ ռասայական, կրոնական, ազգային,*

սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վրանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների:»:

Նշվածի հետ կապված անընդունելի է մեջբերված պատճառների թվում կյանքի իրավունքին առնչվող բացառության բացակայությունը: Մասնավորապես, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել **մահապատժի**, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:»: Նման մոտեցումը համահունչ է Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի

19-րդ 2-րդ մասի հոդվածի կարգավորումներին¹⁹:

Ուստի, անհրաժեշտ է Օրենքի՝ չվերադարձելիության սկզբունքն ամրագրող համապատասխան հոդվածում ներառել նաև մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման արգելքը:

Օրենքը, սահմանելով փախստականի հասկացությունը 6-րդ հոդվածի 1-ին մասով, արտացոլել է Կոնվենցիայի և Արձանագրության համապատասխան դրույթով ամրագրված հասկացությունը, այն է՝ «Փախստական է համարվում այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական

¹⁹Տե՛ս Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf:

բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկրորդի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ:»։ Նույն մասի 2-րդ կետը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը լքել է իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

Օրենքը պաշտպանության որևէ այլ միջոց չի նախատեսում, և օրենսդրությունն ընդհանրապես չի սահմանում լրացուցիչ պաշտպանություն տրամադրելու կարգ, որը հնարավորություն կտար չվերադարձնելու սկզբունքով սահմանված հիմքերի առկայության դեպքում անձին նման պաշտպանություն և համապատասխան կարգավիճակ տալ՝ ապահովելով նրա անվտանգությունը Հայաստանի Հանրապետությունում: Հատկանշական է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ Ոստիկանությունը պատասխանատվություն է կրում ապաստանի տրամադրումը մերժելու մասին վերջնական որոշում ստացած օտարերկրյա քաղաքացու կացության կարգավիճակի հարցը ՀՀ օրենսդրությանը համապատասխան լուծելու համար: Սա հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ ապաստանի տրամադրման մերժում ստացած անձի վերադարձն անհնարին է՝ պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի նորմերով:

Այս առումով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի²⁰ վճիռներում, օրինակ, սահմանված է պետության հայեցողությունը հիմնավոր պատճառների առկայության դեպքում անձին թույլ չտալու մուտք գործել երկիր կամ արտաքսելու հարցում: Այնուամենայնիվ, դատարանը կարևորել է նաև դրա շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի արգելքի ապահովումը, որն ունի բացարձակ բնույթ: Մասնավորապես, Սայիդն ընդդեմ Նիդեռլանդների գործով 2005 թվականի հուլիսի 5-ի վճիռի 46-րդ կետի համաձայն՝ *պետությունները, հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և պայմանագրային պարտավորությունները, իրավունք ունեն վերահսկել օտարերկրացիների մուտքը, բնակությունը և արտաքսումը (...): Այնուամենայնիվ, պետության կողմից արտաքսումը կարող է առաջացնել խնդիրներ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելքի լույսի ներքո և պապասխանատվություն*

²⁰Այսուհետև՝ Եվրոպական դատարան:

տվյալ պետության համար, եթե առկա են լուրջ հիմքեր, որ արտաքսվելու դեպքում անձը կարող է ենթարկվել 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի²¹:

Ավելին, եթե Կոնվենցիան նախատեսում է որոշ բացառություններ չվերադարձելիության սկզբունքից, ապա Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «Ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ»²²:

Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 2002 թվականի կոնվենցիայի 89-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով նախատեսված է, որ «Հանձնում չի կատարվում, եթե ծանրակշիռ հիմքեր կան ենթադրելու, որ հանձնման վերաբերյալ հարցումը կապված է ռասայի, սեռի, դավանանքի, էթնիկական պատկանելության կամ քաղաքական հայացքների համար անձին հեղապնդելու հետ»²³:

Նշված դիրքորոշման, ներպետական օրենսդրության և դրա կիրառման փորձի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ հնարավոր են դեպքեր, երբ անձը, չստանալով փախստականի կարգավիճակ կամ այդ կարգավիճակի դադարման դեպքում պետք է արտաքսվի ծագման երկիր: Այնուամենայնիվ, դա անհնար է, եթե կա հիմնավոր վտանգ, որ նա կենթարկվի խոշտանգման, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Գործնականում այս խնդրի լուծման համար անհրաժեշտ իրավական հիմքերի բացակայությունը տվյալ անձանց, իրավական պաշտպանվածության

²¹Տե՛ս 2005 թվականի հուլիսի 5-ի Սայդն ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանի (գանգատ թիվ 2345/02) վճռի 46-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-69614>,

Տե՛ս 2014թ. նոյեմբերի 18-ի Մ.Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 52589/13) 52-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-148078>:

²²Տե՛ս 1984 թվականի դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը, <http://www.ohchr.org/documents/professionalinterest/cat.pdf> :

²³Տե՛ս 2002 թվականի Քաղաքացիական, ընտանեկան եվ քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիայի 89-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետը, <http://www.parliament.am/library/APH/195.pdf>:

ատումով, թողնում է անապահով վիճակում: Միջազգային իրավաբանությունը նման պարագայում սահմանում է լրացուցիչ պաշտպանության տրամադրման հնարավորություն: Օրինակ՝ Վրաստանում, *բացի փախստականի կարգավիճակից, տրամադրվում է նաև մարդասիրական կարգավիճակ, որը ժամանակավորապես տրվում է այն անձանց, ովքեր չեն համապատասխանում փախստականի կարգավիճակի համար սահմանված չափանիշներին, սակայն ստիպված լքել են իրենց երկիրը բռնության, արտաքին ագրեսիայի, բռնազավթման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների և հասարակական կարգի զանգվածային խախտումների հետևանքով, ինչպես նաև այն անձանց, որոնք հարևան երկրներից են եկել և ապաստան են փնտրում բնական աղետներից*²⁴:

Պաշտպանության նման մեխանիզմ ամրագրված է նաև Պորտուգալիայի օրենսդրությամբ: Մասնավորապես, *սուբսիդիար պաշտպանություն է նախատեսված այն ապաստան հայցողների համար, ում նկատմամբ կիրառելի չեն փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշները, սակայն վերջիններս չեն կարող վերադառնալ իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկիր՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ զգալի վնաս կրելու վրանգի պատճառով*²⁵: Նշվածը հնարավորություն է տալիս չվերադարձնելու իրավունքից օգտվող անձանց կոնկրետ իրավական կարգավիճակով բնակվել օտար երկրում և ստանալ միջազգային պաշտպանություն իր՝ ոչ արդյունավետ ազգային պաշտպանության փոխարեն:

Ուստի, անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ ամրագրել անձանց նոր իրավական կարգավիճակ, որը հնարավորություն կտա լրացուցիչ պաշտպանություն սահմանել փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չբավարարող, սակայն չվերադարձնելու սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Օրենքի 7-րդ հոդված 5-րդ մասի համաձայն՝ «Փախստականի կարգավիճակ ստացած անձի ընտանիքի անդամների՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերի համաձայն ստացած **փախստականի կարգավիճակը**

²⁴Տե՛ս «Փախստականի և մարդասիրական կարգավիճակի մասին» Վրաստանի օրենքի 4-րդ հոդվածը, <http://mra.gov.ge/res/docs/2014022416564743748.pdf>:

²⁵Տե՛ս 27/2008 Ապաստանի օրենքի 7-րդ հոդվածը, <http://www.refworld.org/docid/48e5c13c8.html>:

չեղյալ է հայտարարվում, եթե ընտանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը, սույն օրենքի 53-րդ հոդվածի համաձայն, չեղյալ է հայտարարվել: Այդ անձի ընտանիքի անդամները չեն զրկվում դրանից անմիջապես հետո ապաստանի հայց ներկայացնելու հնարավորությունից՝ հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա:»:

Օրենքի նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ «Փախստականի կարգավիճակ ստացած անձի ընտանիքի անդամների՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերի համաձայն ստացած **փախստականի կարգավիճակը դադարում է,** եթե ընտանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը, սույն օրենքի 53-րդ հոդվածի համաձայն, դադարում է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի: Այդ անձի ընտանիքի անդամները չեն զրկվում դրանից անմիջապես հետո ապաստանի հայց ներկայացնելու հնարավորությունից՝ հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա:»:

Նշված կարգավորումները սահմանում են համապատասխանաբար փախստականի ընտանիքի անդամների կամ խնամարկյալների փախստականի կարգավիճակի չեղյալ հայտարարելը ու դադարելը՝ ընտանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու կամ դադարելու դեպքում: Այս ձևակերպումը որոշակի առումով շեղվում է ապաստանի որոշման ընթացակարգի միջազգային չափանիշներից: Մասնավորապես, նշվածը հնարավորություն չի տալիս անհատապես ուսումնասիրել փախստականի կարգավիճակ ստացած անձի ընտանիքի անդամների կարգավիճակի դադարեցման կամ չեղյալ հայտարարելու հիմքերը, ինչը կարող է հանգեցնել նրանց իրավունքների ոչ պատշաճ իրացման:

Ավելին, Պաշտպանին հասցեագրված բողոքների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ ընտանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու կամ դադարելու դեպքում ընտանիքի մյուս անդամների փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելը կամ դադարեցնելը գործնականում առաջացնում անտեղի բարդություններ: Մասնավորապես, Օրենքի 7-րդ հոդվածի ինչպես 5-րդ, այնպես էլ 6-րդ մասը նախատեսում է միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի ընտանիքի անդամներին փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելուց կամ դադարեցնելուց անմիջապես հետո **ապաստանի նոր հայց ներկայացնելու հնարավորություն՝** հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա: Նշված դեպքում անձը

ունենում է ապաստանի նոր հայց ներկայացնելու, ինչպես նաև Միգրացիոն պետական ծառայության կողմից դրա լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննարկման իրավունք: Սա առաջացնում է կրկնակի աշխատանք պետական մարմնի, իսկ անտեղի բարդեցված գործընթաց ապաստան հայցողի համար: Ուստի, ինչպես պետական լիազոր մարմնի ռեսուրսների խնայողության, այնպես էլ ապաստան հայցողի իրավունքների ապահովման արդյունավետ միջոցներ ստեղծելու տեսանկյունից առավել նպատակահարմար է ընտանիքի յուրաքանչյուր անդամի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու կամ դադարեցնելու վերաբերյալ հարցերը քննարկել անհատական սկզբունքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Օրենքով սահմանել այնպիսի կարգավորում, ըստ որի՝ միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու և դադարելու դեպքում նրա ընտանիքի անդամների կամ խնամարկյալների կարգավիճակը կդադարի միայն դրա համար սահմանված անհատական վարույթով քննություն անցկացնելու և կարգավիճակը չեղյալ հայտարարելու ու դադարելու համար բավարար հիմքերի առկայության դեպքում:

Օրենքի՝ հարցազրույցի անցկացմանն առնչվող 51-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ *«Եթե ապաստան հայցողը չունի հայերենի բավարար իմացություն, ապա միգրացիայի հարցերով լիազոր մարմինը նրան տրամադրում է անվճար թարգմանիչ (...):»*: Ինչպես երևում է, Միգրացիոն պետական ծառայությունը օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է հարցազրույցի ընթացքում ապահովել անվճար թարգմանություն: Հատկանշական է նաև, որ Օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Միգրացիոն պետական ծառայությունից զատ հարցազրույց ապաստան հայցողի հետ անցկացնելու լիազորություն ունեն նաև **Սահմանապահ զորքերը, Ոստիկանությունը և ազատազրկման վայրի վարչակազմը**: Դրա հետ միասին անհասկանալի է թարգմանչական ծառայությունների մատուցման պարտավորությունների մասին դրույթների բացակայությունը ապաստանի հայց ընդունող մարմինների լիազորությունները սահմանող դրույթներում: Մասնավորապես, այն պարագայում, երբ ապաստանի հայց ընդունող մարմինները պարտավոր են տրամադրել անհրաժեշտ տեղեկություն և վարել հարցազրույցներ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնել ցանկացող անձանց հետ, այնուամենայնիվ, նման դեպքերում

թարգմանչի ծառայություններից օգտվելու հնարավորությունն օրենսդրական ամրագրում չի ստացել:

Հետևաբար, անհրաժեշտ է Օրենքում լրացում կատարելու միջոցով ապաստանի հայցեր ընդունող բոլոր պետական մարմինների համար նախատեսել հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանչական ծառայություններ տրամադրելու պարտավորություն:

Օրենքը, կոնվենցիոն չափանիշներից դրականորեն շեղվելով, վարձատրվող աշխատանքի իրավունքով օժտում է և՛ ապաստան հայցողներին, և՛ արդեն իսկ փախստականի կարգավիճակ ստացած անձանց՝ հավասարեցնելով նրանց ՀՀ քաղաքացիների հետ: Մասնավորապես, 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Ապաստան հայցողներն ու Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության փարածքում աշխատանք փնտրելու և աշխատելու նույն պայմաններով, ինչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:»:**

Միևնույն ժամանակ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ժա) կետը, ամրագրելով աշխատանքի թույլտվության բացառությունները, կարգավորման շրջանակից դուրս է թողել ապաստան հայցող անձանց. **«Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել փախստականի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով:»:** Նշվածը կարող է անհարկի շփոթություն առաջացնել և գործնականում սահմանափակել ապաստան հայցող անձանց կողմից իրենց աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունը: Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրական դաշտի միանման կարգավորումների համապատասխանեցնելու միջոցով, սահմանել Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց աշխատանքի թույլտվություն:

Ուստի, պետք է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու միջոցով՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց ցանկում ավելացնել նաև ապաստան հայցող անձանց:

«Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» 2016 թվականի օգոստոսի 10-ի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հրամանի հավելված հանդիսացող՝ Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը սահմանում է. **«Բնակության ներքին կարգապահական կանոնները 2 և ավելի անգամ խախտելու դեպքում՝ բնակչին տրված «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրը, Կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, կարող է ուժը կորցրած ճանաչվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից:»**:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:»**: Քանի որ, Միգրացիոն պետական ծառայության՝ «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը ընդունվում է վարչական մարմնի կողմից հանրային իրավունքի բնագավառում, ունի արտաքին ներգործություն և ուղղված է ապաստան հայցողի իրավունքները վերացնելուն՝ այն համարվում է վարչական ակտ: Ուստի, հարցն անհրաժեշտ է քննարկել նաև վարչական վարույթի շրջանակներում:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված 3-րդ մասով ամրագրված են բարենպաստ վարչական ակտի ուժը կորցնելու համար սահմանված հիմքերը: Նույն մասի բ) կետի համաձայն՝ **բարենպաստ վարչական ակտը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե դա թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ**: Նշվածից ակնհայտ է դառնում, որ եթե վերապահում նախատեսված չէ, ապա նման

սահմանափակում ամրագրող նորմը, որով բարենպաստ վարչական ակտը ուժը կորցրած կճանաչվի, անհրաժեշտ է սահմանել օրենքով:

Նշվածը թույլ է տալիս եզրահանգել, որ անհրաժեշտ է Միգրացիոն պետական ծառայության՝ ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվելու իրավունք ստացած ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունը նախատեսել օրենքով և ուժը կորցրած ճանաչել Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը:

Որոշակի շփոթության տեղիք են տալիս փախստականների իրավունքներին և ապաստանի ընթացակարգին առնչվող ներպետական օրենսդրությամբ գործածվող «**Հատուկ կացարան**» և «**Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն**» հասկացությունները:

2008 թվականի «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը, որը 2016 թվականի փոփոխություններից հետո վերնագրված է «Ապաստան հայցողների կենսաապահովման պայմանները», սահմանում է, որ կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են **ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում**, որն այդ նպատակով ստեղծված հատուկ հաստատություն է:

ՀՀ Կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի N 407-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է «**Հատուկ կացարան**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը վերակազմակերպել է ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության «**Հատուկ կացարան**» պետական հիմնարկից:

ՀՀ կառավարությունը 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն «**Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին**» որոշման մեջ օգտագործվում է **Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոն** եզրույթը:

Վերը նշված իրավական ակտերում օգտագործող եզրույթներն առնչվում են միևնույն հաստատությանը, որտեղ բնակվում են Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող այն անձինք, ովքեր ունեն կացարանի կարիք, սակայն տերմինները նույնը չեն:

Հետևաբար, պետք է քննարկվող ոլորտը կարգավորող բոլոր ներպետական իրավական ակտերում միասնականացնել այն կառույցի անվանումը, որտեղ բնակվում են Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող այն անձինք, ովքեր ունեն կացարանի կարիք:

III. Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովումը հատուկ հաստատություններում

Սույն զեկույցի մշակման շրջանակներում ուսումնասիրման են ենթարկվել ՀՀ տարածքում գործող հատուկ հաստատությունները, որտեղ պահվում կամ բնակվում են փախստականի կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձինք: Իբրև նման հաստատություններ՝ առանձնացվել և այցեր են իրականացվել Միգրացիոն պետական ծառայության «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերը, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկները:

Միգրացիոն պետական ծառայության «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հատուկ կացարանը ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման նպատակով ստեղծված հատուկ հաստատություն է, որտեղ բնակվում են կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները՝ մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը:* Ելնելով Օրենքի նշված ձևակերպումներից՝ ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի N 407-Ն որոշմամբ ստեղծվել է «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը²⁶, որը կառավարվում է Միգրացիոն պետական ծառայության կողմից:

Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ *լիազոր մարմին դիմած ապաստան հայցողներին և ապաստան հայցողի ընդհանրի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է ժամանակավոր տեղավորման կենտրոնում:* Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ժամանակավոր տեղավորման կենտրոնում վերջիններիս տրամադրվում են սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ:*

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների՝ Կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու

²⁶Այսուհետև՝ Կացարան:

հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշմամբ հաստատված կարգով: Նշված կարգի 6-րդ կետով սահմանվում է, որ *ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորվելու մասին ապաստան հայցողների դիմումի հիման վրա լիազոր մարմնի կողմից նրանց տրվում է ուղեգիր*: Այնուամենայնիվ, նույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ *ուղեգիրը տրվում է ժամանակավոր տեղավորման կենտրոնում ազատ սենյակների առկայության դեպքում*: Հատկանշական է, որ ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգի 10-րդ կետով սահմանվում է, որ *ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորվելիս հաշվի են առնվում ապաստան հայցողների ընտանիքի անդամների թիվը, սեռը, տարիքը և այլ հանգամանքներ*:

Ապաստան հայցողների և նրանց ընտանիքի անդամների պայմանների, ինչպես նաև Կացարանում տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը միջազգային և ներպետական օրենսդրության չափորոշիչներին ուսումնասիրելու նպատակով Պաշտպանի իրավասու ներկայացուցիչներն իրականացրել են այցեր այդ հաստատություններ:

Կացարանը գտնվում է Երևանում, Նոր Նորքի Մոլդովական 70/1 մասնաշենքի առաջին և երկրորդ հարկերում: Ապաստան հայցողների բնակության համար նախատեսված է 20 սենյակ: Կացարանում միաժամանակ կարող է բնակվել 45-50 ապաստան հայցող: Կացարանի անձնակազմը բաղկացած է 8 հոգուց՝ գործադիր տնօրեն, հաշվապահ, գնումների պատասխանատու, 4 պահակ և 1 հավաքարար:

Այցի ընթացքում տեղի են ունեցել առանձնազրույցներ ինչպես Կացարանում բնակվող ապաստան հայցողների, այնպես էլ Կացարանի տնօրինության հետ: 2017 թվականի դեկտեմբերի դրությամբ Կացարանում բնակվել են 31 ապաստան հայցող անձ: Հիմք ընդունելով վերջիններիս ազգային պատկանելությունը՝ այցին մասնակցել են նաև արաբերենի, պարսկերենի և իսպաներենի թարգմանիչներ:

Տեղանքի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Կացարանում, բացի ապաստան հայցող անձանց բնակության համար նախատեսված 20 առանձին սենյակներից, առկա են նաև ընդհանուր օգտագործման խոհանոց, հանգստի սենյակ, մանկական սենյակ և սանհանգույցներ: Հանգստի սենյակում առկա է համակարգիչ և ինտերնետ

կապ (WiFi), որն ապահովում է բնակիչների կապն իրենց ազգականների հետ: Առկա են նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված երեք սենյակներ՝ անհրաժեշտ գույքով և կահավորմամբ: Կացարանի ընդհանուր օգտագործման հատվածներում իրականացվում է տեսանկարահանում:

Այցի ընթացքում արձանագրվել են նաև անհապաղ լուծում պահանջող խնդիրներ: Մասնավորապես, տնօրինության կողմից վարվում է «Կարգապահության և անվտանգության կանոնակարգ» մատյանը, որում կատարվում են գրառումներ Կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգի 12.1-րդ կետով սահմանված՝ Կացարանում բնակության ներքին կարգապահական կանոնները խախտած ապաստան հայցողի՝ տնօրենի կողմից գրավոր նախազգուշացումները խախտելու հետևանքների վերաբերյալ: Հատկանշական է, որ նույն կետի համաձայն՝ *բնակության ներքին կարգապահական կանոնների երկու և ավելի անգամ խախտման դեպքում՝ ապաստան հայցողին տրված ուղեգիրը, կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, ուժը կորցրած է ճանաչվում Միգրացիոն պետական ծառայության կողմից:*

Կացարանում բնակության ներքին կարգապահական կանոնները սահմանվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2016 թվականի օգոստոսի 10-ի N 10-Ն հրամանով, որն արձանագրում է Կացարանում բնակվող ապաստան հայցողների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանց չկատարման դեպքում առաջացող հետևանքները: Հաշվի առնելով, որ նշված հրամանով սահմանված պարտականությունները ապաստան հայցողների կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պարագայում նրանք կարող են զրկվել Կացարանում բնակվելու իրավունքից՝ դրանց վերաբերյալ տեղեկացված լինելու իրավունքը և գործնականում դրա ապահովումը չափազանց կարևոր է:

Այցի ընթացքում արձանագրվել է, որ գործնականում ապաստան հայցողներին նշված ներքին կարգապահական կանոնների ծանոթացումը իրականացվում է Կացարան մուտք գործելու պահին, ինչի առնչությամբ ապաստան հայցողը ստորագրում է Կացարան մուտքն ու ելքը արձանագրող գրանցամատյանում: Այնուամենայնիվ, առկա է ներքին կարգապահական կանոնների միայն հայերեն տարբերակ: Սա նշանակում է, որ ապաստան հայցողների կողմից դրանց ծանոթանալը կկրի ձևական բնույթ, եթե

չապահովվի դրանց ներկայացումը ապաստան հայցողներին իրենց համար հասկանալի լեզվով: Սա առաջացնում է ինչպես անձի կողմից իր իրավունքների և պարտականությունների, այնպես էլ դրանից առաջացող հետևանքների դեպքում հնարավոր քայլերի վերաբերյալ իրեն հասկանալի լեզվով տեղեկանալու իրավունքի պատշաճ իրացմանն առնչվող խնդիր: Ավելին, տեղանքի ուսումնասիրման արդյունքում արձանագրվել է նաև, որ Կացարանի ընդհանուր օգտագործման կամ այլ երևացող հատվածներում փակցնելու կամ այլ ճանապարհով ևս ապաստան հայցողները չեն ծանուցվում ներքին կարգապահական կանոնների մասին:

Նշված խնդիրը պայմանավորված է հիմնականում թարգմանության բացակայությամբ: Մասնավորապես, քննարկվող փաստաթղթերը Կացարանում բնակվող ապաստան հայցողներին իրենց համար հասկանալի լեզվով գրավոր չներկայացնելուց զատ, բացակայում է նաև բանավոր թարգմանության հնարավորությունը: Սա պայմանավորված է նաև տեղում համապատասխան թարգմանության մասնագետի հաստիքի բացակայությամբ: Վարչակազմի կողմից նշվել է, որ ապաստան հայցող անձանց հետ կենցաղային շփումը անգլերեն, ռուսերեն կամ հասկանալի որևէ այլ լեզվով այնուամենայնիվ իրականացվում է: Ներկայացված խնդիրը գործնականում ուղղակիորեն կարող է նպաստել Կացարանում բնակվող ապաստան հայցողների իրավունքների ոչ պատշաճ ապահովմանը:

Հատուկ հաստատություններում պահվող ապաստան հայցողների հասկանալի լեզվով իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացված լինելու իրավունքին անդրադարձել է նաև Եվրոպական դատարանը: Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում, դատարանն արձանագրել է, որ *ապաստանի ընթացակարգի խնդիրներից են նաև տրամադրված տեղեկությունների ոչ հստակ լինելը, պետական մարմինների և ապաստան հայցողի միջև հաղորդակցության ոչ պատշաճ համակարգը, ինչը պայմանավորված է նաև թարգմանության համար մասնագետների պակասով*²⁷:

Այնուամենայնիվ, հարկ է նշել նաև, որ ներկայումս Կացարանում անցկացվում են հայոց լեզվի անվճար դասընթացներ՝ շաբաթական երկու

²⁷Տե՛ս 2011թ. հունվարի 21-ի Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 30696/09) 301-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-103050>:

անգամ: Այցերը հնարավորություն են տվել արձանագրել, որ բնակիչները որոշակիորեն կարողանում են միասին հաղորդակցվել հենց հայերենով:

Ուստի, անհրաժեշտ է «Հատուկ կացարանում» բնակվող Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց հասկանալի լեզվով գրավոր և բանավոր եղանակով տրամադրել տեղեկություններ իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Ապաստան հայցողներին Կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգի 19-րդ կետի համաձայն՝ Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին կենտրոնի տնօրինության կողմից տրամադրվում են կենսաապահովման պայմաններ՝ սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ: Նույն կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին օրական հատկացվող սննդամթերքի չափաքանակները և նրանց անկողնային պարագաներով ապահովումը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշման համապատասխանաբար NN 2 և 4 հավելվածներով սահմանված նվազագույն չափորոշիչներով:

Քննարկվող հարցի կապակցությամբ խնդիրն առնչվում է առաջին հերթին սննդին և ապաստան հայցողներին տրամադրվող սննդատեսակներին: Մասնավորապես, առանց հաշվի առնելու Կացարանում բնակվող ապաստան հայցողների կրոնական ու ազգային պատկանելությունը և դրանով պայմանավորված որոշակի սննդատեսակներից օգտվելու անհնարինությունը՝ ապաստան հայցողներին տրամադրվում է նույն տեսակի սնունդ: Այնուամենայնիվ, գործնականում այս խնդիրը փորձ է արվում լուծել՝ քննարկելով սննդատեսակը բոլոր բնակիչների հետ: Չնայած դրան, այս դեպքում նույնպես խնդիրը շարունակվում է մնալ այդպիսին:

Այս խնդիրը բարձրացվել է նաև Կացարանում բնակվող ապաստան հայցողների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում: Մասնավորապես, վերջիններս նշել են, որ իրենց կրոնական առանձնահատկություններով պայմանավորված հաճախ ունենում են խնդիրներ մատուցվող սննդատեսակների հետ կապված:

Հաջորդ հարցը վերաբերում է Կացարանի բնակիչների սանիտարահիգիենիկ պայմաններին: Առանձնազրույցների ընթացքում ապաստան հայցողների կողմից հնչել են բողոքներ՝ կապված խոհանոցի սանիտարական վիճակի հետ (օրինակ՝ խոհանոցում միջատների առկայությունը):

Հատուկ հաստատություններում պահվող ապաստան հայցող անձանց տրամադրվող սննդի չափորոշիչներ և առանձնահատկություններ են սահմանվել նաև ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցում: Մասնավորապես, փաստաթղթի 48-րդ կետի (xi) պարբերությունը սահմանում է, որ «Կալանավորվածներին պետք է տրամադրվի **սննդարար արժեք ունեցող՝** փարիքին, առողջական վիճակին և մշակութային/կրոնական առանձնահատկություններին համապատասխան **սնունդ:** Հրի կանանց և կերակրող մայրերի համար պետք է ապահովվի համապատասխան սննդակարգ: **Սննդի պատրաստման և ընդունման փարածքները պետք է համապատասխանեն սանիտարահիգիենիկ փարական պահանջներին:**»:

Ապաստան հայցող անձանց կացարաններում սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված հարցին անդրադարձ է կատարել նաև Եվրոպական դատարանը: Իր՝ Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ *միգրանտների համար նախատեսված հատուկ կացարաններում առկա գերծանրաբեռնվածությունը, ինչպես նաև ոչ բավարար սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը կարող է հանգեցնել պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված խոշտանգումների արգելման սկզբունքի խախտման*²⁸:

Ուստի, անհրաժեշտ է Կացարանում ապաստան հայցողների սննդի տրամադրման հիմքում դնել յուրաքանչյուրի ազգային և կրոնական պատկանելության առանձնահատկությունները, ինչպես նաև ֆիզիկական վիճակը: Կացարանում, մասնավորապես խոհանոցում, ապահովել պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններ:

«Ապերական սահմանի անցման կետերի հատուկ կացարաններ

²⁸Տե՛ս 2011թ. հունվարի 21-ի Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 30696/09) 222-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-103050>:

Սույն զեկույցի կազմման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը համատեղ աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային ավտոնագության ծառայության, մասնավորապես՝ սահմանապահ զորքերի հետ: Ազգային անվտանգության ծառայությունն ունի կարևորագույն դեր ՀՀ պետական սահմանը հատող անձանց իրավունքների, նրանց նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ապահովման գործում: Այս առումով, հարցն առավել զգայուն է դառնում, երբ խոսքը վերաբերում է ապաստան հայցող անձանց:

ՀՀ կառավարության՝ 2011 թվականի մայիսի 12-ի N 703-Ն որոշմամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերը: Դեռևս 2010 թվականից սկսվել է ՀՀ պետական սահմանի անցման կետերի արդիականացման և ժամանակակից տեխնիկական միջոցներով զինման գործընթաց, որի արդյունքում 2016 թվականին մեկնարկել է արդիականացված «Գոգավան» և «Բագրատաշեն» սահմանային անցման կետերի աշխատանքը, իսկ 2017 թվականին՝ նաև «Բավրա» սահմանային անցման կետը:

ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի N 783-Ն որոշմամբ սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ու տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը: Նշված փաստաթղթով սահմանված հատուկ կացարաններում օրենքով սահմանված տևողությամբ բնակվում են Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձինք:

Ինչպես նշվեց, ապաստան հայցող անձանց իրավունքների իրացման տեսանկյունից կարևոր է, որպեսզի Սահմանապահ զորքերն անհրաժեշտ գիտելիքներ ունենան ապաստանի ընթացակարգի, դրա հետ կապված՝ անձի իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև իրենց լիազորությունների վերաբերյալ: Սա բխում է հենց միջազգային պահանջներից: Մասնավորապես, ՄԱԿ ՓԳՀ-ի Փախստականի պաշտպանության և խառը միգրացիայի վերաբերյալ գործողությունների ծրագրի 3-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ *անհրաժեշտ է իրականացնել **սահմանապահ զորքերի** և միգրացիոն աշխատակիցների վերապատրաստումներ*:²⁹:

²⁹Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի 2007 թվակնի հունվարի 1-ին վերանայված Փախստականի պաշտպանություն և խառը միգրացիա. 10 կետից բաղկացած գործողությունների ծրագրի 3-րդ կետի 2-րդ պարբերությունը, <http://www.unhcr.org/4742a30b4.pdf>:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1998 թվականի դեկտեմբերի 15-ի Սահմանային անցման կետերում ապաստան հայցող անձանց առաջինը հանդիպող պաշտոնյաների վերապատրաստման վերաբերյալ R(98) 15 հանձնարարականը *անդամ պետություններից պահանջում է իրականացնել ապաստան հայցող անձանց առաջինը հանդիպող պաշտոնյաների վերապատրաստումներ:*

Նույն հանձնարարականի 1-ին կետը սահմանում է, որ «Այն պաշտոնյաների վերապատրաստման դասընթացները, ովքեր պարտավոր են ապաստան հայցողներին ուղղորդել դեպի միգրացիայի լիազոր մարմին, պետք է ուղղված լինեն ձեռք բերելու.

1.1 հիմնական գիտելիքներ փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության մասին ազգային օրենսդրության վերաբերյալ (...),

1.2 հիմնական գիտելիքներ 1951 թվականի Կոնվենցիայի և Փախստականների կարգավիճակի մասին 1967 թվականի արձանագրության դրույթների և միջազգային իրավունքով ամրագրված՝ փախստականի պաշտպանության հիմնական սկզբունքների վերաբերյալ (...),

1.3 հիմնական գիտելիքներ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի վերաբերյալ,

1.4 հիմնական գիտելիքներ ազգային և միջազգային օրենսդրությամբ ամրագրված՝ կալանքի սահմանափակումների վերաբերյալ,

1.5 հմտություններ՝ տարբերակելու և հայտնաբերելու ապաստանի խնդրանքը, նույնիսկ այն դեպքերում, երբ ապաստան հայցողները ի վիճակի չեն հստակ ներկայացնելու ապաստան հայցելու իրենց մտադրությունը (...),

1.6 հմտություններ՝ կատարելու ճիշտ ընտրություն և անհրաժեշտության դեպքում օգտվելու բանավոր թարգմանությունից:»³⁰:

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության³¹, ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի ծրագրերի շրջանակներում իրականացվել են փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության միջազգային և ՀՀ չափանիշների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ, այդ թվում՝ Սահմանապահ գործերի

³⁰ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1998 թվականի դեկտեմբերի 15-ի Սահմանային անցման կետերում ապաստան հայցող անձանց առաջինը հանդիպող պաշտոնյաների վերապատրաստման վերաբերյալ R(98) 15 հանձնարարականի 1-ին կետը, <http://www.refworld.org/pdfid/3ae6b39d10.pdf>:

³¹Այսուհետ՝ ՀԿԽԸ:

ծառայողների համար: Դասընթացները կազմակերպվել են ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Գոգավան», «Բավրա», «Ագարակ» անցման կետերում, ինչպես նաև «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում ծառայություն իրականացնող Սահմանապահ զորքերի ծառայողների համար: Դրանք հիմնականում վերաբերել են փախստականների և ապաստան հայցողների միջազգային պաշտպանության մեխանիզմներին և ներպետական օրենսդրական կարգավորումներին, ինչպես նաև ներկայացվել են 2016 թվականի ընթացքում Օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները: Դասընթացները կարևոր են եղել հատկապես այն առումով, որ դրանց մասնակցել են Սահմանապահ զորքերի իրավասու ներկայացուցիչներ, ովքեր պատասխանատու են դասընթացի առարկա հարցերի համար: Դրանց մասնակցել են նաև Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

Դասընթացների նպատակն է եղել բարձրացնել մասնակիցների իրազեկության աստիճանը ՀՀ միջազգային պարտավորությունների, երկրի տարածք մուտք գործելու, չվերադարձելիության սկզբունքի, ապաստանի ընթացակարգի հասանելիության, ապաստան հայցողների բացահայտման ու ուղղորդման ներպետական և միջազգային կարգավորումների վերաբերյալ:

Նույն ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել են նաև կլոր սեղան քննարկումներ Սահմանապահ զորքերի՝ սահմանային վերահսկողության համար պատասխանատու ծառայողների, ինչպես նաև ոլորտի մյուս իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպումներին մասնակցել են նաև Պաշտպանի աշխատակազմի, ՄԱԿ ՓԳՀ-ի, Եվրոպական սահմանային և ափերի անվտանգության գործակալության («ՖՐՈՆՏԵՔՍ»), ՀԿԽԸ-ի և Միգրացիոն պետական ծառայության ներկայացուցիչները: Քննարկման թեմաները հիմնականում վերաբերել են Կոնվենցիայի և Արձանագրության դրույթներին, փախստականների պաշտպանության հիմնական սկզբունքներին, ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատին, ապաստան հայցողների բացահայտմանը և ուղղորդմանը, ինչպես նաև սահմանի անցման կետերում փախստականների ընդունելությանը և աջակցությանը: Ներկայացվել են նաև ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները, ինչպես նաև փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ ձեռնարկվող միջոցները: ՀԿԽԸ կողմից ներկայացվել են նաև կառույցի՝ ապաստան հայցողների և փախստականների համար թարգմանչական ծառայությունների ապահովմանն առնչվող գործառույթները:

Քննարկումները կարևոր են փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների վերաբերյալ Սահմանապահ զորքերի իրազեկության բարձրացման տեսանկյունից: Դրանք թույլ են տալիս ոչ միայն ուսումնասիրել ոլորտի օրենսդրական կարգավորումները, այլ նաև քննարկել գործնականում դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչն էլ դրական է անդրադառնում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վրա: Ընդ որում, դրանք հենց այնպիսի թեմաներով դասընթացներ են, որոնք նախատեսված են Եվրպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերը նշված հանձնարարականով:

Դասընթացները կարևոր են նաև մասնակիցների միջև աշխատանքային արդյունավետ համագործակցություն հաստատելու տեսանկյունից: Խոսքը հատկապես վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին և ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողներին: Այդ համագործակցության հիման վրա ներկայում իրականացվում է համատեղ աշխատանք՝ իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ համապատասխան ահազանգերի առկայության, տեղեկության փոխանակման անհրաժեշտության դեպքերում:

Սույն գեկույցի մշակման նպատակով այցեր են իրականացվել հատուկ կացարաններ: Ուսումնասիրվել են ապաստան հայցողների իրավունքների, հատուկ կացարանների պայմանները և այլն:

Համաձայն Օրենքի 35-րդ հոդվածի՝ Սահմանապահ զորքերը ՀՀ պետական սահմանի անցման կետերում ստուգում են ապաստան հայցողների փաստաթղթերը, որի արդյունքում օրինական մուտք գործածներին տեղյակ են պահում Միգրացիոն պետական ծառայություն գնալու անհրաժեշտության մասին՝ իրազեկելով այդ մարմնի գտնվելու վայրի և ապաստանի դիմում ներկայացնելու կարգի մասին, իսկ անօրինական մուտք գործածներին՝ զրանցում համապատասխան զրանցամատյանում և տեղավորում սահմանային անցման կետում տեղակայված հատուկ կացարանում:

Այցերը և կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել արձանագրել, որ հատուկ կացարանների մի մասն անհրաժեշտ է լրացնել կահույքով և կենցաղային իրերով: Պետական սահմանի «Շիրակ» անցման կետում առկա չէ հատուկ կացարան:

Ուստի, առաջարկվում է բարելավել հատուկ կացարանների պայմաններն ըստ անհրաժեշտության՝ համալրելով դրանք անհրաժեշտ

կահույքով և կենցաղային պարագաներով, իսկ պետական սահմանի «Շիրակ» անցման կետում կառուցել հատուկ կացարան:

Օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով, Սահմանապահ զորքերը, ի թիվս այլ պետական մարմինների, հարցազրույց են անցկացնում ապաստան հայցողի հետ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ պաշտպանություն գտնելու ցանկության, անձի և ընտանիքի բոլոր ուղեկցող անդամների մասին անձնական տվյալների, ինչպես նաև ծագման երկրից դեպի Հայաստանի Հանրապետություն ուղևորության նկարագրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար: Ապաստան հայցողների հետ հարցազրույցների պատշաճ իրականացումը գործնականում ապահովելու, ինչպես նաև հատուկ կացարաններում բնակվող ապաստան հայցողների իրավունքներն ու պարտականությունները հասկանալի լեզվով իրենց լիարժեք ներկայացնելու նպատակով հնարավորինս անհրաժեշտ է ապահովել թարգմանություն օտար լեզուներով:

Պետական մարմինների կողմից ապաստան հայցող անձանց հետ իրավահարաբերությունների ընթացքում պատշաճ թարգմանություն ապահովելու առնչությամբ Եվրոպական դատարանը Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում, արձանագրել է, որ *ապաստանի ընթացակարգի խնդիրներից են նաև տրամադրված տեղեկությունների ոչ հստակ լինելը, պետական մարմինների և ապաստան հայցողի միջև հաղորդակցության ոչ պատշաճ համակարգը, ինչը պայմանավորված է նաև թարգմանիչների պակասով*³²:

ՀՀ պետական սահմանի անցման կետերում և մասնավորապես, հատուկ կացարաններում թարգմանության ապահովումը կարևոր է ինչպես ապաստան հայցող անձանց հասկանալի լեզվով տեղեկացված լինելու և այլ իրավունքների պատշաճ ապահովման, այնպես էլ Սահմանապահ զորքերի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման տեսանկյունից: Կարևոր է նաև Սահմանապահ զորքերի ծառայողների համար կազմակերպել օտար լեզուների դասընթացներ:

Ուստի, առաջարկվում է ՀՀ պետական սահմանի անցման կետերում հնարավորինս ապահովել օտար լեզուներով թարգմանության հնարավորություն՝ ապաստան հայցող բոլոր անձանց համար հասկանալի

³²Տե՛ս 2011թ. հունվարի 21-ի Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 30696/09) 301-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-103050>:

լեզվով իրենց իրավունքներն ու պարտականությունները ներկայացնելու, համապատասխան հարցազրույցներ անցկացնելու, ինչպես նաև Սահմանապահ գործերի ծառայողների՝ հատուկ կացարաններում գտնվող անձանց հետ առավել լիարժեք շփումն իրականացնելու համար:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ

Թե՛ Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներում և թե՛ ոլորտի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցներում բազմիցս անդրադարձ է կատարվել ազատությունից զրկման վայրերում, այդ թվում նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում³³, պահվող անձանց իրավունքների ապահովմանն առնչվող խնդիրներին: Նշված փաստաթղթերում բարձրացված՝ քրեակատարողական հիմնարկներին առնչվող խնդիրները հիմնականում վերաբերել են ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովմանը, տեղաբաշխմանը, արտաքին աշխարհի հետ կապին, պահման պայմաններին և այլն:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով «Պաշտպանին է վերապահված «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտրի արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը»: Այս կարգավորումների ուժով, ինչպես նաև նպատակ ունենալով իրականացնել Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովման և պաշտպանության վերաբերյալ իրավիճակի բազմակողմանի ուսումնասիրություն, այցեր են իրականացվել «Արմավիր», «Սևան», «Աբովյան», «Արթիկ», «Նուբարաշեն» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներ, որտեղ սույն զեկույցի մշակման պահին ազատությունից զրկված են եղել փախստականի կարգավիճակ ունեցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող դատապարտյալներ ու կալանավորված անձինք: Այցերի

³³Այսուհետև՝ քրեակատարողական հիմնարկ:

ընթացքում տեղի են ունեցել առանձնագրույցներ ազատությունից զրկված փախստականների և ապաստան հայցողների հետ: Կատարված այցերի ընթացքում վեր հանված խնդիրները հիմնականում վերաբերել են փախստականների և ապաստան հայցողների՝ կարգավիճակով պայմանավորված իրավունքների ապահովմանը:

Հասկանալի լեզվով իր վերաբերյալ տեղեկություններ կամ փաստաթղթեր ստանալն անձի կարևորագույն իրավունքներից է: Նշվածն ավելի է կարևորվում այն դեպքերում, երբ նա զրկված է լինում ազատությունից: Համաձայն ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նեյսոն Մանդելայի կանոններ)՝ *քրեակատարողական օրենսդրությունը և վերաբերելի կարգավորումները պետք է ամրագրեն բանտարկյալի՝ անհրաժեշտ տեղեկություններ և իրավաբանական խորհրդատվություն ստանալու (այդ թվում անվճար իրավաբանական օգնության միջոցով), ինչպես նաև հարցում կամ դիմում ներկայացնելու իրավունքները: Անհրաժեշտ է սահմանել նաև նրանց՝ պարտականությունների (ներառյալ վերաբերելի կարգապահական պատժամիջոցների) և այլ հարցերի վերաբերյալ դրույթներ, որոնք անհրաժեշտ են քրեակատարողական հիմնարկի կենսապայմանների հետ հարմարվելու համար: Նշված փաստաթղթով ամրագրված մեկ այլ կանոնի համաձայն՝ վերոնշյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի առավել հաճախ օգտագործվող լեզվով՝ հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկի ազատագրկված անձանց կարիքները: Եթե ազատությունից զրկված անձը չի հասկանում նշված լեզուներից ոչ մեկը, ապա պետք է ապահովվի համապատասխան թարգմանություն³⁴:*

Ազատությունից զրկված անձին՝ իրեն հասկանալի լեզվով անհրաժեշտ տեղեկություն ստանալու սկզբունքն ամրագրվել է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 30.1 կանոնում: Դրանում մասնավորապես նշվում է, որ «Բանտ ընդունման պահին, ինչպես նաև ընդունումից հետո՝ անհրաժեշտ հաճախականությամբ, բոլոր բանտարկյալները պետք է գրավոր և բանավոր իրենց հասկանալի լեզվով տեղեկացվեն բանտի կարգապահության կանոնակարգերի և բանտում իրենց ունեցած իրավունքների և

³⁴Տե՛ս ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նեյսոն Մանդելայի կանոններ) 54-րդ և 55-րդ կանոնները, https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/GA-RESOLUTION/E_ebook.pdf:

*պարտականությունների մասին»:*³⁵ Պետության այս պարտավորության նպատակն է ապահովել քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց՝ իրենց հասկանալի լեզվով իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

«Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ամրագրում է, որ «*Դատապարտյալն իրավունք ունի մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների, դատարանի նշանակած պատժի կատարման կարգի և պայմանների, դրանց փոփոխությունների, առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև միջազգային համապատասխան փաստաթղթերի մասին*»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «*Ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի՝ մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալ իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների վերաբերյալ*»:

Հասկանալի լեզվով իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկություն ստանալու ազատությունից զրկված անձի իրավունքը հատկապես կարևորվում է այնպիսի դեպքերում, երբ պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը կարող է առաջացնել պատասխանատվություն կամ երբ խոսքը վերաբերում է բժշկական փաստաթղթերին:

Սրա հետ կապված գործնականում կարող են առաջ գալ խնդիրներ: Մասնավորապես, քրեակատարողական հիմնարկներ կատարված այցերը և առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված անձանց ներկայացրած բողոքները թույլ են տվել արձանագրել, որ հասկանալի լեզվով ազատությունից զրկված փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գրավոր և բանավոր եղանակով տեղեկություն ստանալու իրավունքը գործնականում չի ապահովվում: Խնդիրը հատկապես պայմանավորված է քրեակատարողական հիմնարկներում թարգմանության բացակայությամբ: Նշվածն իր հերթին գործնականում առաջացնում է այլ խնդիրներ: Օրինակ՝ իրենց վերաբերյալ

³⁵Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 30.1-րդ կանոնը, <https://rm.coe.int/16806f5b92>:

բժշկական փաստաթղթերի բովանդակությունը պարզելու համար ազատությունից զրկված անձինք ստիպված են լինում դիմել քրեակատարողական հիմնարկի վարչակազմին կամ իրենց խցակիցներին, որն էլ իր հերթին կարող է առաջացնել բժշկական գաղտնիքի խախտման հարց:

Այսպես, նշված խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ապահովել այնպիսի պրակտիկա, որպեսզի ազատությունից զրկված փախստականներին և ապաստան հայցող անձանց՝ իրենց իրավունքներին և պարտականություններին առնչվող տեղեկությունները և իրենց վերաբերյալ սահմանված փաստաթղթերը տրամադրվեն իրենց հասկանալի լեզվով՝ ապահովելով դրանց թարգմանությունը:

Ազատությունից զրկված անձի մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքը՝ որպես անձի արժանապատվության և ֆիզիկական անձեռնմխելիության երաշխավորման պայման, ենթադրում է պետության պարտականությունը ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ուղղված ազատությունից զրկված անձի նշված իրավունքի իրացմանը:

Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի ապահովումն անազատության մեջ գտնվող անձի վերասոցիալականացման պատշաճ գործընթացի կարևոր երաշխիք է: Ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են այնպիսի պայմաններ, որոնք բավարար կլինեն, որպեսզի ազատությունից զրկված լինելու ընթացքում անձը չկորցնի հասարակությունում նախկինում ձեռք բերած վարքագծի կանոնները և հմտությունները: Ազատությունից զրկումը չպետք է լինի այնպիսին, որ հանգեցնի ընտանեկան և սոցիալական կապերի կորստին կամ խաթարմանը:

Իրականում, ընտանիքի հետ կայուն կապի պահմանումն ունի կարևորագույն նշանակություն նախևառաջ այն առումով, որ դա երաշխիք է ազատ արձակվելուց հետո անձի վերաինտեգրումը հասարակություն ապահովելու տեսանկյունից: Դրանից բացի, պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ընտանեկան կյանքի բացակայությունն է հաճախ ընկած ազատությունից զրկման վայրերում կատարված ինքնավնասման կամ ինքնասպանության պատճառների հիմքում: Ընդ որում, ընտանեկան կապերը բնույթով այնպիսին են, որ չեն կարող լրացվել անգամ

բանտային սոցիալական աշխատանքների ամենազարգացած համակարգի պայմաններում:

Կարևորելով նշված գաղափարը՝ Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և շրջանառության է դրվել օրենսդրական առաջարկությունների փաթեթ, որով առաջարկվող կարգավորումներն ուղղված են կալանավորված անձի՝ մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությունն արգելելու հստակ մեխանիզմի նախատեսմանը, ազգային օրենսդրության միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովմանը:

Ազատությունից զրկված անձանց կապն արտաքին աշխարհի և մերձավոր ազգականների հետ երաշխավորող իրավական կարգավորումներն ամրագրված են նաև ազատությունից զրկված անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում: Մասնավորապես, ՄԱԿ-ի 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն կանոնների 37-րդ կետի համաձայն՝ «Բանտարկյալներին պետք է հնարավորություն ընձեռվի *ինչպես գրագրությամբ, այնպես էլ այցելությունների միջոցով, կանոնավոր ժամանակահատվածների ընդմիջմամբ և անհրաժեշտ վերահսկողությամբ, կապ պահպանել իրենց ընտանիքների և ընկերների հետ:*»: Նույն փաստաթղթի 38-րդ կետի 1-ին պարբերությամբ սահմանվում է, որ «Ազատությունից զրկված օտարերկրյա քաղաքացիները պետք է հնարավորություն ունենան կապ հաստատելու իրենց երկրների դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների հետ:»³⁶:

Եվրոպական բանտային կանոնների 24.1-րդ կանոնի համաձայն՝ «Ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակով, հեռախոսով կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել կամ տեսակցել իրենց ընտանիքի անդամների, այլ անձանց և կազմակերպությունների հետ:»³⁷:

Եվրոպայի խորհրդի խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի

³⁶Տե՛ս ՄԱԿ-ի 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն կանոնների 37-րդ կետը և 38-րդ կետի 1-ին պարբերությունը, <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/TreatmentOfPrisoners.aspx>:

³⁷Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 24.1-րդ կանոնը, <https://rm.coe.int/16806f5b92>:

կանխարգելման եվրոպական կոմիտեի³⁸ իրավաբանության համաձայն՝ *ազատությունից զրկված անձանց համար շար կարևոր է բավարար շփումն արտաքին աշխարհի հետ: Առաջին հերթին կալանավորված անձը պետք է հնարավորություն ստանա պահպանելու հարաբերություններն իր ընտանիքի և մտերիմ բարեկամների հետ*³⁹:

Հաշվի առնելով, որ ապաստան հայցող անձինք և փախստականները, գտնվելով հեռու իրենց հայրենիքից, հաճախ առանձին են ապրում իրենց ընտանիքի անդամներից և մյուս մերձավոր ազգականներից: Ազատությունից զրկվելու դեպքում, արտաքին աշխարհի հետ կապի տեսանկյունից, նրանք դառնում են առավել խոցելի: Խաթարվում է նաև նրանց վերասոցիալականացման ապահովումը:

Այս առումով ՄԱԿ ՓԳՀ-ի 2012 թվականի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» ուղեցույցի 48-րդ կետի (vii) պարբերությունը սահմանում է, որ *«Ազատությունից զրկված ապաստան հայցողները պետք է հնարավորություն ունենան կանոնավոր կերպով կապվելու (ներառյալ հեռախոսային կապի կամ հնարավորության դեպքում նաև ինտերնետի միջոցով) և հանդիպելու իրենց մերձավոր ազգականների, ընկերների, իսկ ցանկության դեպքում նաև կրոնական, միջազգային կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:*»⁴⁰:

ՀՀ օրենսդրությամբ նույնպես սահմանվում են ազատությունից զրկված անձանց կապն արտաքին աշխարհի հետ ապահովելուն ուղղված դրույթներ: Ավելին, ըստ ոլորտը կարգավորող իրավական ակտերի՝ մերձավոր ազգականների հետ կապը չափազանց կարևոր նշանակություն ունի նաև դատապարտյալին ազատ արձակելուն նախապատրաստելու տեսանկյունից: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.2 մասի 9-րդ կետի համաձայն՝ *«Դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի է առնվում նաև նրա՝ ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը:*»:

³⁸ Այսուհետև՝ ԽԿԿ:

³⁹Տե՛ս 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր հաշվետվության 51-րդ կետը, <https://rm.coe.int/1680696a3f>:

⁴⁰Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցի 48-րդ կետի (vii) պարբերությունը, <http://www.refworld.org/docid/503489533b8.html>:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Դատապարտյալն ունի արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունք, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, **կապի հնարավոր միջոցների հանգույցներ**, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ»:

Ավելին, օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Ուղղիչ հիմնարկներում սահմանված կանոնակարգի նպատակն է ապահովել կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ «Ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ»:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերը ձերբակալված և կալանավորված անձանց կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ապահովելու համար ստեղծում են համապատասխան պայմաններ: Այդ նպատակով ստեղծվում են տեսակցությունների սենյակներ, **կապի հնարավոր միջոցների հանգույցներ**, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ»:

Վերը շարադրվածը վկայում է, որ դատապարտյալի և կալանավորված անձի վերասոցիալականացման հիմքում ընկած է նաև նրա կապն արտաքին աշխարհի հետ:

Այնուամենայնիվ, խնդիրը դժվարանում է այն դեպքերում, երբ դատապարտյալների կամ կալանավորված անձի ազգականները Հայաստանի Հանրապետությունում չգտնվելու պատճառով՝ չեն կարող օգտվել տեսակցությունից, իսկ ազատությունից զրկված անձի կողմից հիմնարկի տաքսոֆոններից օգտվելը կապված է ֆինանսական միջոցների հետ, ինչը հաճախ բացակայում է: Այս խնդրով պայմանավորված բարդությունների առկայության մասին է վկայում նաև Պաշտպանին հասցեագրված դիմումների

վերլուծությունը: Դրանցում, մասնավորապես, խոսվում է այլընտանքային կապի միջոցների և տաքսոֆոնից օգտվելու համար անհրաժեշտ գումարների բացակայությամբ պայմանավորված խնդիրների մասին: Նշված դեպքում դատապարտյալի և կալանավորված անձի կապն արտաքին աշխարհի հետ հասնում է նվազագույնի կամ վերանում է:

Գործնականում նման իրավիճակներում հիմնականում հայտնվում են օտարերկրացի դատապարտյալները և կալանավորված անձինք, որոնց շարքում կան նաև փախստականի կարգավիճակ ունեցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձինք: Նշված խնդրի լուծման ճանապարհներից կարող է լինել քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց՝ ընտանիքի անդամների և ազգականների հետ հաղորդակցվելու նպատակով կապի այլընտրանքային միջոցների, օրինակ՝ տեսազանգի նախատեսումը: Համապատասխան փոփոխության վերաբերյալ ուսումնասիրություն կատարելը սահմանված է 2017 թվականի մայիսի 4-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման Հավելված N1-ի 15-րդ կետով: Չնայած նրան, որ նման միջոցառումների նախատեսումը համարվում է դրական, այնուամենայնիվ, առանձին դեպքերում օրենսդրությամբ տեսազանգի՝ որպես ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու միջոցի, վերաբերյալ իրավական կարգավորումներ ամրագրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի քանի կարևոր հանգամանքի: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է քրեակատարողական հիմնարկներում համապատասխան տեխնիկական միջոցների ապահովմանը, երկարատև կամ կարճատև տեսակցությունները, ինչպես նաև հեռախոսազանգերը տեսազանգով փոխարինելու հնարավորության նախատեսմանը, նման հնարավորությունից օգտվելու նվազագույն քանակի ամրագրմանը, տեսազանգերի ընթացքում խորհրդապահական պայմանների ապահովմանը և այլ հարցերին:

Հիմք ընդունելով կատարված վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ անհրաժեշտ է մշակել և ընդունել տեսազանգի՝ որպես ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու միջոցի ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումները և այդ

**ուղղությամբ քրեակատարողական հիմնարկների վերազինում
իրականացնելու միջոցով՝ ապահովել գործնականում դրանց կիրառումը:**

Ապաստան հայցող անձինք և փախստականները, հաճախ լինելով այլ մշակույթի պայմաններում բախվում են այնպիսի խնդրի, որն առնչվում է նրանց կրոնի և դավանանքի ազատության հետ:

Անձի կրոնի ազատության իրավունքն ամրագրված է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի միջազգային փաստաթղթերում: Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու հավատի ազատության իրավունք, այդ իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը, իր հավատը և համոզմունքը ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ մեկտեղ դավանելու, հրապարակավ կամ մասնավոր կարգով ուսմունք քարոզելու, ծիսակատարություն, կրոնական պաշտամունք և արարողություններ կատարելու ազատություն:»*:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետով ի թիվս այլնի ամրագրվում է անձի կրոնի ազատության իրավունքը. *«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:»*:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածով ամրագրվում է փախստականների կրոնական ազատության իրավունքը. *«Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում գտնվող փախստականներին սեփական կրոնն ազատորեն դավանելու և սեփական երեխաների կրոնական ազատ դաստիարակության հարցում ցուցաբերում են առնվազն նույնքան բարեհաճ վերաբերմունք, որքան իրենց քաղաքացիներին:»*:

Միջազգային իրավական երաշխիքները վերաբերում են ոչ միայն ազատության մեջ, այլ նաև ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց: Մասնավորապես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1990 թվականի դեկտեմբերի 14-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն սկզբունքները սահմանող թիվ 45/111 բանաձևի 3-րդ կետի համաձայն՝ *«Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հարգել այն խմբի կրոնական համոզմունքները և մշակութային մոտեցումները, որին պատկանում են*

դատապարտյալները, երբ տեղական պայմաններում առկա է նման պահանջ»⁴¹:

ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցի 48-րդ կետի, որով սահմանվում է ազատությունից զրկված ապաստան հայցողների նվազագույն իրավունքները, (ix) պարբերության համաձայն «Անհրաժեշտ է ապահովել անձի կրոնի ազատության իրավունքի իրացումը»⁴²:

Ավելին, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 29.1-րդ կանոնը սահմանում է, որ «Բանտարկյալների մտքի, խղճի և կրոնի ազատությունը պետք է հարգվի»⁴³:

Կրոնի ազատության իրավունքը երաշխավորված է նաև ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածով, որում մասնավորապես, նախատեսվում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք»:

Ազատությունից զրկված անձանց կրոնի ազատության իրավունքը ամրագրվում է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքում, որի 91-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Ուղղիչ հիմնարկ կարող է հրավիրվել հոգևորական: Թույլատրվում է կազմակերպել կրոնական ծիսակատարություններ, օգտվել պաշտամունքի առարկաներից և կրոնական գրականությունից: Ուղղիչ հիմնարկի վարչակազմն այդ նպատակով առանձնացնում է համապատասխան տարածք»: Ավելին, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 131-րդ կետով սահմանվում է, որ «Կալանավորված անձանց և դատապարտյալներին երաշխավորվում է մտքի, խղճի և կրոնի ազատություն»:

⁴¹Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1990 թվականի դեկտեմբերի 14-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն սկզբունքները սահմանող թիվ 45/111 բանաձևի 3-րդ կետը, <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/BasicPrinciplesTreatmentOfPrisoners.aspx>:

⁴²Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցի 48-րդ կետի (ix) պարբերությունը, <http://www.refworld.org/docid/503489533b8.html>:

⁴³Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 29.1-րդ կանոնը, <https://rm.coe.int/16806f5b92>:

իսկ նույն որոշման XV բաժնով սահմանվում են կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կրոնական ծեսերին մասնակցելու կարգը:

Չնայած անձի կրոնի ազատության իրավունքի իրացումը երաշխավորող նշված միջազգային և ներպետական իրավական պահանջներին, գործնականում առաջանում են ազատությունից զրկված փախստականների ու ապաստան հայցող անձանց կրոնի ազատության իրավունքին առնչվող մի շարք խնդիրներ:

Մասնավորապես, Պաշտպանին ներկայացված դիմումների վերլուծությունը վկայում է, որ գործնականում արձանագրվել են դեպքեր, երբ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված փախստականների և ապաստան հայցող անձանց համար չեն ապահովվել կրոնի ազատության իրավունքի պատշաճ իրացման համար անհրաժեշտ բավարար պայմաններ, քանի որ հատուկ ծիսակարգերի իրականացման համար չեն նախատեսվել խորհրդապահական պայմաններ՝ թույլ չտալով կրոնական ներկայացուցչի հետ մեկուսի հաղորդակցվել:

Մեկ այլ խնդիր առնչվում է քրեակատարողական հիմնարկներում կրոնական գրականության առկայությանը: Այս առնչությամբ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 133-րդ կետով սահմանվում է, որ «*Կալանավորված անձանց կամ դատապարտյալներին թույլատրվում է իրենց մոտ ունենալ, հանձնուքներով ստանալ, ձեռք բերել, **իրենց մոտ պահել կրոնական գրականություն, կրոնական պաշտամունքի առարկաներ՝ բացառությամբ ծակող ու կտրող առարկաների ձև ունեցող կամ թանկարժեք մետաղններից և քարերից պատրաստված կամ պատմական կամ մշակութային արժեք ներկայացնող իրերի, և օգտվել դրանցից:***»: Ավելին, քրեակատարողական հիմնարկներ կատարված այցերի ընթացքում պարզվել է, որ մի քանիսում առկա է սահմանափակ քանակությամբ գրականություն: Առանձնագրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք նշել են, որ կան քրեակատարողական հիմնարկներ, որտեղ բացակայում է իրենց կրոնական ուղղվածության վերաբերյալ, ինչպես նաև իրենց համար հասկանալի լեզվով (արաբերեն, պարսկերեն և այլն) կրոնական գրականությունը: Քրեակատարողական հիմնարկներում կրոնական գրականության բազմազանությունն ապահովելու անհնարինության պայմաններում անձը զրկված է ազատությունից զրկման վայրում գտնվելու ընթացքում սեփական

կրոնը դավանելու հնարավորությունից, իսկ առավելագույնը հարկադրված է դրանք ձեռք բերել սեփական միջոցների հաշվին: Սա, իհարկե, նույնպես գործնականում առաջացնում է կրոնական ազատության պատշաճ իրացման հետ կապված խնդիրներ:

Մյուս կարևոր խնդիրն առնչվում է ազատությունից զրկված անձին կրոնով պայմանավորված հատուկ սնունդ տրամադրելուն: ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցի 48-րդ կետի (xi) պարբերությամբ ամրագրվում է, որ *«Անհրաժեշտ է տրամադրել անձի տարիքին, առողջությանը և մշակույթին/կրոնին համապատասխան սնունդ, ինչպես նաև նախատեսել հատուկ դիետիկ սնունդ հղի կամ կերակրող կանանց համար:»*⁴⁴: Վկայակոչված միջազգային չափանիշների վերլուծությունը թույլ է տալիս հանգել նրան, որ հաճախ պատշաճ սննդի տրամադրումը համարվում է անձի կրոնի ազատության իրավունքի իրացման համար պարտադիր պայման:

Ազատությունից զրկված անձանց կրոնի ազատության իրավունքը երաշխավորող միջազգային փաստաթղթերում առկա են նաև առանձին կարգավորումներ կրոնով պայմանավորված՝ դատապարտյալներին հատուկ սնունդ տրամադրելու վերաբերյալ: Մասնավորապես, «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 22.1-րդ կանոնի համաձայն՝ *«Բանտարկյալներին պետք է տրամադրվի դիետիկ սնունդ՝ հիմք ընդունելով նրանց տարիքը, առողջական վիճակը, ֆիզիկական պայմանները, կրոնը, մշակույթը և նրանց աշխատանքի բնույթը:»*:

Քրեակատարողական հիմնարկներ իրականացված այցերի և ազատությունից զրկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ կրոնի հիմքով պայմանավորված հատուկ սննդից օգտվող ազատությունից զրկված անձանց չի տրամադրվում ընդհանուրից առանձին սնունդ, որը գործնականում կապահովի նրանց կրոնի ազատության իրավունքի պատշաճ իրացումը: Ավելին, ոլորտը կարգավորող իրավական ակտերում բացակայում է որևէ կարգավորում, որը կնախատեսի կրոնի հիմքով ազատությունից զրկված անձանց հատուկ սննդի տրամադրում:

⁴⁴Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցի 48-րդ կետի (xi) պարբերությունը, <http://www.refworld.org/docid/503489533b8.html>:

Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված ապաստան հայցող անձանց և փախստականների կրոնի ազատության իրավունքի պատշաճ ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

գործնականում ապահովել բավարար պայմաններ կրոնական ծեսերի իրականացման համար: Կարևոր է նաև ազատությունից զրկված փախստականների և ապաստան հայցող անձանց համար անհրաժեշտ կրոնական գրականության մատչելիությունը:

ամրագրել կրոնի հիմքով ազատությունից զրկված անձանց հատուկ սննդի տրամադրումը նախատեսող օրենսդրական կարգավորումներ: Անհրաժեշտ է նաև նախատեսել այդ նպատակի համար ապահովել հատուկ սննդի տրամադրումը դրա կարիքն ունեցող ազատությունից զրկված անձանց:

Անձի առողջության պահպանման իրավունքի ապահովումն անկախ նրանից՝ գտնվում է վերջինս ազատության մեջ, թե՛ ոչ, կրում է պարտադիր բնույթ: Նշված իրավունքն ամրագրում է ստացել ինչպես միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ:

Այսպես, ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք:»*:

Եվրոպական դատարանն այս հարցի շուրջ արտահայտելով իր դիրքորոշումը, նշել է, որ *ի տարբերություն սովորական պայմանների, երբ պետության պարտասխանատվության հարց չի առաջանում, ազատությունից զրկված անձանց դեպքում, որոնք գտնվում են պետության ուղղակի հսկողության ներքո, կարող է առաջանալ պետությունների պոզիտիվ պարտավորությունը*⁴⁵:

Ելնելով նշվածից՝ կարելի է արձանագրել, որ պետության պարտականությունը՝ ապահովելու ազատությունից զրկված անձանց

⁴⁵Տե՛ս 2015 թ, հունիսի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը առողջության հետ կապված հարցերի վերաբերյալ թեմատիկ զեկույցը, էջ 17, http://www.echr.coe.int/Documents/Research_report_health.pdf:

առողջության իրավունքի պատշաճ իրացումը, առավել կարևորվում է այն առումով, որ վերջիններս, իրենց կարգավիճակով պայմանավորված, կախվածության մեջ են գտնվում իշխանություններից: Ավելին, պետության ցանկացած գործողություն կամ անգործություն ամենայն հավանականությամբ մեծ ազդեցություն կունենա ազատությունից զրկված անձանց ֆիզիկական բարեկեցության վրա: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ ելնելով ազատությունից զրկված անձանց կարգավիճակից՝ նրանց առողջության պահպանման իրավունքի ապահովման պետության պարտականության մակարդակն ավելի բարձր է:

Անդրադառնալով ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքին՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ *ազատությունից զրկված բոլոր անձինք իրավունք ունեն, որ իրենց առողջությունն ու բարեկեցությունը պաշտպանեն պահպանվեն, ի թիվս այլ միջոցների, անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու միջոցով*⁴⁶:

«Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 22.1 կանոնը սահմանում է, որ *«Ազատազրկված անձանց պետք է տրամադրվի սննդարար դիետա՝ հաշվի առնելով նրանց տարիքը, առողջական և ֆիզիկական վիճակը, կրոնը, մշակույթը և աշխատանքի բնույթը*»: Նույն հանձնարարականի 40.3-րդ կանոնի համաձայն՝ *«Ազատազրկված անձանց պետք է հասանելի լինեն պետությունում առկա առողջապահական ծառայությունները՝ առանց նրանց իրավական կարգավիճակով պայմանավորված խտրականության*»: Ավելին, հանձնարարականի 46.1-րդ կանոնում նշվում է, որ *«Հատուկ խնամք պահանջող հիվանդություն ունեցող ազատազրկված անձինք պետք է տեղափոխվեն հատուկ մասնագիտացված հաստատություններ կամ քաղաքացիական բուժական հիմնարկներ, երբ նման բուժումը հասանելի չէ ազատազրկման վայրերում*»: ⁴⁷:

Նույնաբնույթ պահանջ է ներկայացվում նաև ՄԱԿ-ի 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված Ազատությունից զրկված անձանց հետ

⁴⁶Տե՛ս 2010 թվականի հունիսի 15-ի Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 34334/04) 104-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-99403>:

⁴⁷Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 22.1-րդ, 40.3-րդ, 46.1-րդ կանոնները, <https://rm.coe.int/16806f5b92>:

վարվեցողության նվազագույն կանոնների 22-րդ կետի 2-րդ ենթակետով, որի համաձայն՝ *«Ազատությունից զրկված հիվանդ անձանց, ովքեր մասնագետի ծառայության կարիք ունեն, պետք է տեղափոխել հատուկ բժշկական հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ:»*⁴⁸:

ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցի 48-րդ կետի, որով ամրագրված են ազատությունից զրկված ապաստան հայցող անձանց նվազագույն պայմանները, (vi) պարբերության համաձայն՝ *«Անհրաժեշտության դեպքում ապաստան հայցող անձանց պետք է տրամադրվի համապատասխան բժշկական օգնություն, (...):»*:

Բնակչության, այդ թվում նաև ազատությունից զրկված անձանց, առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ դրույթներն ամրագրված են նաև ՀՀ ներպետական օրենսդրությամբ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության հոդված 85-ի 1-ին մասով սահմանվում է, որ *«Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:»*:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդված 12-ի 1-ին մասը սահմանում է դատապարտյալի հիմնական իրավունքները, իսկ դրա 4-րդ կետում ամրագրվում է *առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունքը*:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ *«Ձերբակալված կամ կալանավորված անձն ունի առողջության պահպանման իրավունք, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին:»*:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք 12-րդ հոդվածը սահմանում է ազատությունից զրկված անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը. *«Ձերբակալված, կալանավորված և ազատագրված վայրերում պատիժ կրող անձինք իրավունք*

⁴⁸Տե՛ս ՄԱԿ-ի 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն կանոնների 22-րդ կետի 2-րդ ենթակետը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18499>:

ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Չնայած ոլորտի վերաբերյալ օրենսդրական լուծումներին, գործնականում շարունակում է արդիական մնալ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ոչ պատշաճ ապահովումը:

«Հ քրեակատարողական հիմնարկներում առողջության պահպանման իրավունքին առնչվող խնդիրներին անդրադարձել է նաև ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում: Մասնավորապես, զեկույցում հիմնականում անդրադարձ է կատարվում *ինչպես քրեակատարողական հիմնարկներում բժշկական անձնակազմի ցածր քանակի, այնպես էլ ազատությունից զրկված անձանց բժշկական սպասարկման վերաբերյալ խնդիրներին*⁴⁹:

Քննարկվող ոլորտում առկա այս բացերին անդրադարձ է կատարվել նաև «Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ» Պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում: Դրանում, մասնավորապես, նշվում է, որ «*ինչպես վկայում են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրականացրած մշտադիտարկման, ազատությունից զրկված անձանց բողոքների ուսումնասիրության արդյունքները, քրեակատարողական հիմնարկներում պատշաճ բժշկական օգնության և սպասարկման ոչ բավարար ծավալները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց համակցությունն էլ կանխորոշում է ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման մակարդակը: Բժշկական օգնության և սպասարկման իրավունքի ապահովման հիմնական նախադրյալներն են բժշկական անձնակազմի անկախությունն ու պատշաճ որակավորումը, կադրային բավարար հագեցվածությունը, տեխնիկական հագեցվածությունը, անհրաժեշտ սենյակային պայմանների, ինչպես նաև բավարար և պատշաճ որակի դեղորայքային ապահովվածությունը, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ապահովումը:*»⁵⁰:

⁴⁹Տե՛ս Հայաստանի վերաբերյալ ԽԿԿ 2016 թվականի զեկույցի 5-րդ գլուխը, <https://rm.coe.int/16806bf46f>:

⁵⁰Տե՛ս «Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի

Նշված խնդրին անդրադարձ է կատարվել նաև «Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման վերաբերյալ» Պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում:

Առանձնազրույցների ընթացքում բարձրացված մյուս խնդրին առնչվում է քրեակատարողական հիմնարկներում թարգմանության բացակայության պատճառով գործնականում ազատությունից զրկված անձանց բժշկական գաղտնիքի պահպանման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, իրենց վերաբերյալ բժշկական փաստաթղթերի բովանդակությանը տեղեկանալու համար նրանք ստիպված են լինում դիմել քրեակատարողական հիմնարկի վարչակազմին կամ իրենց խցակիցներին: Անդրադառնալով բժշկական գաղտնիքի պահպանման կարևորությանը Եվրոպական դատարանը Զ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի 1997 թվականի փետրվարի 25-ի վճռում նշել է, որ *առողջության վերաբերյալ տեղեկության գաղտնիությունը Կոնվենցիայի անդամ պետությունների իրավական համակարգի կարևոր սկզբունք է: Կարևոր է ոչ միայն հարգել պացիենտի գաղտնիքը, այլ նաև պահպանել դա բժշկական մասնագիտության և առհասարակ բժշկական սպասարկման շրջանակներում:*

Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված փախստականներին և ապաստան հայցող անձանց անհրաժեշտ դեղորայքը տրամադրվի ժամանակին և պատշաճ: Պետք է գործնականում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կբացառեն բժշկական գաղտնիքի սկզբունքի որևէ խախտում:

IV. Ապաստան հայցողների իրավունքների ապահովումը Միգրացիոն պետական ծառայության որոշումների կայացման շրջանակներում

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցելու վերաբերյալ դիմումը քննարկվում է Միգրացիոն պետական ծառայության կողմից: Քննարկման արդյունքով պայմանավորված՝ ընդունվում է որոշում ապաստան հայցողին փախստական ճանաչելու կամ ապաստանի տրամադրումը մերժելու վերաբերյալ: Այդ որոշումները պարունակում են նաև վերլուծական հատված, որով ներկայացվում են կայացված որոշման հիմնավորումներ: Որոշման հիմքում դրվում են փախստարկների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովմանն առնչվող միջազգային և ներպետական վերաբերելի իրավակարգավորումներով սահմանված չափորոշիչները: Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Միգրացիայի հարցերով լիազոր մարմինը (Միգրացիոն պետական ծառայություն) իրականացնում է ապաստանի հայցին առնչվող՝ նույն օրենքով սահմանված ընթացակարգերը և ունի դրանց վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու **բացառիկ իրավասություն**:»*:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ *«Ապաստանի տրամադրման ընթացակարգ է համարվում Միգրացիոն պետական ծառայության կողմից իրականացվող՝ փախստականի կարգավիճակի և ապաստանի տրամադրման վարչական վարույթը:»*: Բացի դրանից՝ Կոնվենցիան ստորագրած որևէ պետության կողմից արդեն փախստական ճանաչված ապաստան հայցողի վերաբերյալ Միգրացիոն պետական ծառայությունը կայացնում է միայն փախստականին ապաստան տրամադրելու կամ չտրամադրելու մասին որոշում:


Սույն զեկույցի շրջանակներում վերլուծության են ենթարկվել 2014-ից 2017 թվականի սեպտեմբեր Միգրացիոն պետական ծառայության՝ ապաստանի տրամադրումը մերժելու վերաբերյալ բոլոր, ինչպես նաև փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մասին մի քանի որոշումներ՝ պարզելու դրանց համապատասխանությունը ՀՀ միջազգային պարտավորություններին և ներպետական օրենսդրությանը: Քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան է հայցել 757 անձ, իսկ

փախստականի կարգավիճակ է ստացել 431 անձ⁵¹: Միգրացիոն պետական ծառայության կողմից ընդունված՝ փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մասին որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանցում հաշվի են առնվում ապաստան հայցողի ծագման երկրում առկա վիճակի վերաբերյալ հանրահայտ և հավաստի աղբյուրներից ձեռք բերված տեղեկությունները: Այդ որոշումներում գնահատվում է նաև ապաստան հայցողի հետ անցկացված հարցազրույցների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների արժանահավատությունը և անդրադարձ է կատարվում չվերադարձելիության սկզբունքի կիրառմանը: Որոշումները պարունակում են նաև փաստերին, ինչպես նաև միջազգային և ներպետական համապատասխան իրավակարգավորումներին հղումներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են նաև Միգրացիոն պետական ծառայության կողմից դիմումների քննության ժամկետները: Օրինակ՝ Սիրիայի քաղաքացիների կողմից ներկայացված՝ ապաստանի դիմումները քննության են առնվել հնարավոր սեղմ ժամկետներում: Հաշվի առնելով, որ դրանք եղել են ակնհայտ հիմնավոր հայցեր, կապված Սիրիայում տեղի ունեցող ներքին հակամարտությունների հետ, դա հիմք է հանդիսացել Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա անձին ճանաչել փախստական: Հատկանշական է, որ ապաստանի հայց ներկայացրած այդ անձանցից բոլորը ստացել են փախստականի կարգավիճակ:

Քննարկվող ժամանակահատվածում Միգրացիոն պետական ծառայության կողմից 103 անձի վերաբերյալ կայացվել է ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշում, որոնք ենթարկվել են ուսումնասիրության: Ստորև ներկայացվում են այդ որոշումների վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ ըստ անձանց ծագման երկրների.

⁵¹Տե՛ս Միգրացիոն պետական ծառայության պաշտոնական կայքէջը, http://www.smsmta.am/?menu_id=151:



Հայաստանի Հանրապետությունում ապաստանի տրամադրումը մերժելու մասին Միգրացիոն պետական ծառայության որոշումների դեմ ՀՀ վարչական դատարան է բերվել 61 բողոք, որոնցից 8-ն ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է⁵²:

Միգրացիոն պետական ծառայության՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումների ուսումնասիրման արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնք կարևոր են ապաստան հայցողների իրավունքների ապահովման տեսանկյունից:

Մասնավորապես, հատուկ ուշադրություն է դարձվել այդ որոշումների հիմնավորվածությանը: Համաձայն Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Միգրացիոն պետական ծառայությունը ապաստանի տրամադրման որոշում կայացնելիս պետք է հիմնվի նաև ապաստան հայցողի ծագման երկրի մասին առկա տեղեկությունների վրա, որոնք պետք է լինեն ստույգ, արդի և տարբեր վստահելի աղբյուրներից ձեռք բերված (...):»:

Անդրադառնալով ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հավաստիությանը՝ Եվրոպական դատարանը Սուֆին և Էլմին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2011 թվականի հունիսի 28-ի վճռում նշել է, որ ծագման երկրի վերաբերյալ տեղեկության կշիռը գնահատելիս պետք է հաշվի առնել աղբյուրը, մասնավորապես՝ անկախությունը, հավաստիությունը և օբյեկտիվությունը: Անդրադառնալով զեկույցներին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետք է հաշվի առնել դրանց հեղինակությունը և հեղինակի

⁵²Տե՛ս Միգրացիոն պետական ծառայության պաշտոնական կայքէջը, http://www.smsmta.am/?menu_id=141:

համբավը, քննությունների լրջությունը, որոնց հիման վրա կազմվել են զեկույցները, եզրակացությունների հետևողականությունը և դրանց հաստատումն այլ աղբյուրների կողմից⁵³:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով ապաստանի դիմումի քննարկման ընթացքում տեղեկությունների ձեռքբերմանը և դրանց համապարփակ վերլուծությանը, հատկապես կարևորել է այն դեպքերը, երբ անձի վերաբերյալ մերժման որոշում կայացնելու և նրան արտաքսելու դեպքում կա հիմնավոր վտանգ, որ նա կենթարկվի խոշտանգման, վատ, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, Դատարանը Աբդուլլահին և Քարիմնիան ընդդեմ Թուրքիայի գործով 2009 թվականի սեպտեմբերի 22-ի վճռում նշել է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ներքո համապատասխան արդյունավետ միջոցի հասկացությունը պահանջում է հատկապես այն բողոքի անկախ և լուրջ քննություն՝ համաձայն որի առկա են լուրջ հիմքեր հավատարմության, որ դիմողին համապատասխան երկիր արտաքսելու դեպքում առաջ կգա 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի դրսևորման լուրջ ռիսկ⁵⁴:

Ավելին, Եվրոպական դատարանը Մ. Ա. -ն ընդդեմ Շվեյցարիայի գործով 2014 թվականի նոյեմբերի 18-ի վճռում արձանագրել է, որ պետությունները, հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և պայմանագրային պարտավորությունները, իրավունք ունեն վերահսկել օտարերկրացիների մուտքը, բնակությունը և արտաքսումը (տե՛ս նաև 2010 թվականի մարտի 9-ի Ռ. Դ. -ն ընդդեմ Շվեդիայի գործի (գանգատ թիվ 41827/07) 48-րդ կետը): **Այնուամենայնիվ, պետության կողմից արտաքսումը կարող է առաջացնել խնդիրներ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելման լույսի ներքո և պատասխանատվություն փոխալ պետության համար, եթե առկա են լուրջ հիմքեր, որ անձն արտաքսվելու դեպքում կարող է ենթարկվել 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի⁵⁵:**

⁵³Տե՛ս 2011թ. հունիսի 28-ի Սուֆին և Էլմին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 8319/07 և 11449/07) 230-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-105434>:

⁵⁴ Տե՛ս 2009թ. սեպտեմբերի 22-ի Աբդուլլահին և Քարիմնիան ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 30471/08) 108-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-94127>:

⁵⁵ Տե՛ս 2014թ. նոյեմբերի 18-ի Մ.Ա-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 52589/13) 52-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-148078>:

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի տրամաբանությունը քննարկվող հարցի կապակցությամբ, կարելի է եզրակացնել, որ ապաստանի դիմումի քննարկման ընթացքում պետությունը պետք է իրականացնի ձեռքբերված հավաստի և վերաբերելի տեղեկության ամբողջական վերլուծություն: Ավելին, այն դեպքերում, երբ կա կոնվենցիայով նախատեսված 3-րդ հոդվածի խախտման հիմնավոր վտանգ, պետական իրավասու մարմինը պետք է ձեռնարկի առավել արդյունավետ միջոցներ դա բացառելու ուղղությամբ:

ՄԱԿ ՓԳՀ-ի 2011 թվականի դեկտեմբերին Կոնվենցիայի և Արձանագրության հիման վրա կազմված Փախստականի կարգավիճակի տրամադրման ընթացակարգի և չափանիշների վերաբերյալ ձեռնարկի և ուղեցույցի Միջազգային պաշտպանության վերաբերյալ 5-րդ ուղեցույցի 35-րդ պարբերության համաձայն՝ *«(...) Ծագման երկրի վերաբերյալ մանրամասն տեղեկությունը պարտադիր է պարզելու համար, թե արդյոք հետապնդման վախը օբյեկտիվորեն հիմնավոր է:»*⁵⁶:

Անդրադառնալով ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հավաքագրման հետ կապված հարցին՝ ՄԱԿ ՓԳՀ-ի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն. դեպի ընդլայնված համագործակցություն ծրագրի շրջանակներում 2004 թվականի փետրվարին ընդունված փաստաթղթի 1-ին պարբերության համաձայն՝ *այն վերաբերում է ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն եզրույթին և միտված է բացահայտելու ինչպես պետությունների, այնպես էլ ՄԱԿ ՓԳՀ-ի և պետությունների միջև հնարավոր համագործակցության ուղիները՝ առավել համակարգային եղանակով ընդունված չափանիշների հիման վրա տեղեկություններ փոխանակելու համար:* Այս փաստաթղթի 9-րդ պարբերության համաձայն՝ *«Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունն անհրաժեշտ է ապաստանի դիմումին առնչվող ընդհանուր և մասնավոր հանգամանքները գնահատելու համար: Որոշում կայացնող մարմինը պետք է գնահատի դիմումատուի խնդրանքը և վստահելիությունը, ինչպես նաև նրա «պարմությունը» ծագման երկրում հայտնի իրավիճակի համատեքստում:»*: Ավելին, Իրավական երաշխիքները, չափանիշները և սահմանափակումները գլխի 22-ից 50-րդ

⁵⁶Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի 2011 թվականի դեկտեմբերին Կոնվենցիայի և Արձանագրության հիման վրա կազմված Փախստականի կարգավիճակի տրամադրման ընթացակարգի և չափանիշների վերաբերյալ ձեռնարկի և ուղեցույցի Միջազգային պաշտպանության վերաբերյալ 5-րդ ուղեցույցի 35-րդ պարբերությունը, <http://www.unhcr.org/3d58e13b4.pdf>:

պարբերություններով սահմանվում են ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, օգտագործման և դրանց հիման վրա փախստականի կարգավիճակի տրամադրման վերաբերյալ որոշումների կայացման վերաբերյալ **Չփարատված կասկածները հոգուր դիմումատուի մեկնաբանելուն, Աղբյուրների ընտրությանը և գնահատմանը, Տեղեկությանը և դրա աղբյուրների մատչելիությանը, Ծագման երկրներում տեղեկության աղբյուրներին, Անձնական տվյալների պաշտպանությանը, Տեղեկությունը տրամադրողի արժանահավատությանը և հեղինակությանն առնչվող սկզբունքներին**⁵⁷:

Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2013 թվականի հունիսի 26-ի 2013/32/EU Միջազգային պաշտպանության շնորհման և դադարեցման միասնական ընթացակարգերի վերաբերյալ վերանայված դիրեկտիվի 39-րդ կետի համաձայն՝ «Պարզելու համար արդյոք դիմումատուի ծագման երկրում գերակայում է անորոշ վիճակ, անդամ պետությունները պետք է իրականացնեն հստակ և արդի տեղեկության հավաքագրում այնպիսի աղբյուրներից, ինչպիսիք են՝ Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակը, ՄԱԿ ՓԳՀ-ն, Եվրոպայի խորհուրդը և այլ համապատասխան միջազգային կազմակերպությունները:»⁵⁸:

Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության որակն ու ճշգրտությունը կարևորվում է նաև Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի կողմից: Վերջինիս, որպես ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հավաքագրման ոլորտում կարևոր չափորոշիչ, առանձնացնում է *նպատակային, վերաբերելի, հավաստի, ճշգրիտ և արդի տեղեկության թափանցիկ և անաչառ հավաքագրումը*⁵⁹: Ավելին, կառույցի կողմից մշակվել է նաև տեղեկությունների հավաքագրման և արձանագրման մեթոդաբանություն, որի կարևոր ուղղություններից է անհրաժեշտության դեպքում ծագման երկրի վերաբերյալ

⁵⁷Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի 2004 թվականի փետրվարի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն. դեպի ընդլայնված համագործակցություն ծրագրի շրջանակներում ընդունված փաստաթղթի 1-ին, 9-րդ և 22-ից 50-րդ պարբերությունները, <http://www.refworld.org/pdfid/403b2522a.pdf>:

⁵⁸Տե՛ս Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի միության խորհրդի 2013 թվականի հունիսի 26-ի 2013/32/EU դիրեկտիվայի 39-րդ կետը, <http://eurlex.europa.eu/legalcontent/EN/TXT/PDF/?uri=CELEX:32013L0032&from=EN>:

⁵⁹Տե՛ս Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի պաշտոնական կայքէջը, <https://www.easo.europa.eu/country-origin-information>:

հավելյալ տեղեկության հավաքագրումը, հետազոտության աղբյուրների հավաստիության ստուգումն ու գնահատումը և այլն⁶⁰:

Նշյալ ոլորտի վերաբերյալ հրապարակվել են նաև մի շարք ձեռնարկներ: Մասնավորապես, Ավստրիական կարմիր խաչի ընկերության, ինչպես նաև Ծագման երկրի և ապաստանի դիմումի հետազոտմանն ու փաստաթղթավորման Ավստրիական կենտրոնի «Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հետազոտումը» ձեռնարկում առանձնացվում են ծագման երկրի մասին տեղեկության որակի չափորոշիչները, ինչպես նաև դրանց հետազոտման և կիրառման միջազգային սկզբունքները: Մասնավորապես, *որպեսզի ծագման երկրի մասին տեղեկությունը համարվի որակյալ, այն պետք է լինի վերաբերելի, հավաստի, անաչառ, ճշգրիտ, արդի, թափանցիկ և թիրախային: Համաձայն նշյալ ձեռնարկի՝ տեղեկատվությունը պետք է հետազոտվի և կիրառվի պահպանելով չեզոքության, անաչառության, տվյալների պաշտպանության, հանրային տեղեկության օգտագործման և տեղեկության հասանելիության մասով կողմերի հավասարության սկզբունքները*⁶¹:

Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության օգտագործումը փախստականի կարգավիճակի տրամադրման հարցում. քննադատող հեռանկարները 2009 թվականի մայիսի փաստաթղթի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն որպես մերժման որոշումների հիմք գլխի Առաջարկություններ բաժնի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունը պետք է օգտագործվի խնդիրները վեր հանելու և դիմումատուի վերաբերյալ հավաքագրված տվյալների հավաստիությունը ստուգելու, ինչպես նաև հետագա ռիսկերը գնահատելու և անձի՝ ծագման երկիր վերադարձնելու հարցը որոշելու նպատակով:»*: Ավելին, 8-րդ պարբերությամբ սահմանվում է, որ *«Անհրաժեշտ է մշակվել գործնականում ծագման երկրի վերաբերյալ տեղեկության օգտագործման մասին հարուկ ուղեցույցներ, որոնք պետք է կիրառվեն ապաստանի քաղաքականության*

⁶⁰Տե՛ս Ապաստանի աջակցման եվրոպական գրասենյակի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հավաքագրման մեթոդաբանությունը, https://coi.easo.europa.eu/administration/easo/PLib/EASO_COI_Report_Methodology.pdf:

⁶¹Տե՛ս Ավստրիական կարմիր խաչի ընկերության, ինչպես նաև Ծագման երկրի և ապաստանի դիմումի հետազոտմանն ու փաստաթղթավորման Ավստրիական կենտրոնի 2013 թվականի «Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության հետազոտումը» ձեռնարկը, էջ 30, <https://www.coi-training.net/handbook/Researching-Country-of-Origin-Information-2013-edition-ACCORD-COI-Training-manual.pdf>:

իրականացման, ինչպես նաև հիմնական վերապատրաստումների և հավատարմագրման ընթացակարգերի ընթացքում (...):»⁶²:

Այնուամենայնիվ Միգրացիոն պետական ծառայության՝ ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ անհրաժեշտ է կատարելագործել ապաստան հայցողների ծագման երկրի վերաբերյալ տեղեկության ձեռք բերման աշխատանքները և ընդլայնել ապաստան հայցողների ծագման երկրի վերաբերյալ տեղեկության աղբյուրների շրջանակը՝ որոշումների հիմնավորվածությունը բարձրացնելու նպատակով: Գործնականում որոշումների մեծ մասում օգտագործված տեղեկությունները հաճախ թարմ չեն (ունեն նվազագույնը 3-ամսյա վաղեմություն): Ինչպես վկայում է միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ ծագման երկրի վերաբերյալ ձեռքբերված տեղեկությունները պետք է լինեն թարմ, իսկ աղբյուրների շրջանակը՝ լայն, որպեսզի առավելագույնս ապահովվի որոշումների հիմնավորվածությունը:

Նշված պահանջների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ է առաջին հերթին սահմանել տեղեկությունների ձեռքբերման կայուն և հստակ մեխանիզմ, որի շրջանակներում կապահովվեն նաև ապաստան հայցողների իրավունքները: Այս առումով հատկապես ուշադրության արժանի է նաև ապաստան հայցողների վերաբերյալ ստացված տեղեկության գաղտնիության սկզբունքը, քանի որ գործնականում հնարավոր են տեղեկությունների հավաքագրման այնպիսի մեխանիզմների կիրարկում, որոնք կարող են հանգեցնել երրորդ պետությանը անձի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելուն: Կարևոր է ապահովել նաև տարբեր լեզուներով ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում և դրանց պատշաճ թարգմանություն: Սա թույլ կտա ապահովել ծագման երկրի վերաբերյալ առավել հավաստի տեղեկության ուսումնասիրում, այդ թվում նաև այդ երկրի լեզվով:

Հիմք ընդունելով նշվածը՝ անհրաժեշտ է իրականացնել ապաստան հայցողների ծագման երկրների վերաբերյալ որակյալ և հավաստի տեղեկատվության ձեռքբերման պրակտիկայի և մեթոդաբանության

⁶²Տե՛ս Ծագման երկրի վերաբերյալ տեղեկության օգտագործումը փախստականի կարգավիճակի տրամադրման հարցում. քննադատող հեռանկարները 2009 թվականի մայիսի փաստաթղթի Ծագման երկրի վերաբերյալ տեղեկություն որպես մերժման որոշումների հիմք գլխի Առաջարկություններ բաժնի 2-րդ և 8-րդ պարբերությունները, <http://www.refworld.org/pdfid/4a3f2ac32.pdf>:

վերաբերյալ միջազգային չափանիշների ուսումնասիրություն և ապահովել դրանց կիրառումը գործնականում՝ իրականացնելով իրավասու աշխատակիցների վերապատրաստում, ինչպես նաև ապաստան հայցող անձի ծագման երկրի լեզվով տեղեկությունների հավաքագրում և դրանց թարգմանություն:

Որոշումների հիմնավորվածության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև դատական պրակտիկայով ձևավորված պահանջների կատարումը: Միգրացիոն պետական ծառայության՝ ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումները թույլ են տալիս արձանագրել, որ դրանց հիմնավորումները մեծամասամբ չեն արտացոլում ինչպես Եվրոպական դատարանի, այնպես էլ հայաստանյան դատարանների դիրքորոշումները: Մինչդեռ դատական և դրանով պայմանավորված նախադեպային պրակտիկայի կիրառումը կնվազեցնի ապաստան հայցողների իրավունքների ոչ պատշաճ ապահովման դեպքերը և Միգրացիոն պետական ծառայության կողմից դատարանի հայտնած դիրքորոշումներին հակասող որոշումների կայացումը, ինչպես նաև կապահովի միասնականությունը: Սա իր հերթին կնպաստի հենց Միգրացիոն պետական ծառայության պրակտիկայի կանխատեսելիության ապահովմանը:

Նշված խնդրի կապակցությամբ ստորև ներկայացվում են լիազոր մարմնի կողմից ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումների հիմնավորվածությանը վերաբերող Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված, ինչպես նաև ներպետական դատարանների կողմից ինչպես վարչական ակտի, այնպես էլ կոնկրետ Միգրացիոն պետական ծառայության քննարկվող որոշման հիմնավորվածության վերաբերյալ դիրքորոշումները:

Մասնավորապես, Եվրոպական դատարանը Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում նշել է, որ *ապաստանի դիմումը քննող իրավասու մարմինը պետք է լինի անկախ և իրականացնի ապաստանի դիմումի փակ և բազմակողմանի քննարկում*⁶³:

Մեկ այլ՝ Չախալն ընդդեմ Միացյալ Թագավորությունների գործով 1996 թվականի նոյեմբերի 15-ի վճռում Եվրոպական դատարանը արձանագրել է

⁶³Տե՛ս 2011թ. հունվարի 21-ի Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 30696/09) 387-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-103050>:

նաև, որ իրավասու մարմինը պետք է իրականացնի ապաստանի տրամադրման վերաբերյալ դիմումի ըստ էության քննարկում⁶⁴:

Հիմք ընդունելով այն, որ Միգրացիոն պետական ծառայության՝ ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումը համարվում է վարչական ակտ, անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշմանը դրա հիմնավորվածության վերաբերյալ: Մասնավորապես, դատարանը թիվ ՎԴ/6781/05/12 գործով 2015 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ նշել է, որ «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական ակտը հիմնավորելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարչական վարույթի մասնակիցների՝ սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը»: Ավելին, նշվել է նաև, որ «(...) **օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով՝ գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները:** Միաժամանակ վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ այն քննող դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում:»⁶⁵:

Անդրադառնալով Միգրացիոն պետական ծառայության՝ ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումների հիմնավորվածությանն առնչվող ներպետական դատական ակտերին, կարելի է առանձնացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից ներկայացված՝ ապաստանի դիմումների քննության համար կարևոր սկզբունքներից մեկը, որը նաև սահմանվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում: Մասնավորապես, «Վարչական մարմնի կողմից

⁶⁴Տե՛ս Եվրոպական դատարանի Ապաստանի ընթացակարգը և արդյունավետ միջոցները փաստաթղթի կետ 8-ը, http://www.echr.coe.int/Documents/COURTalks_Asyl_Talk_ENG.PDF: Տե՛ս նաև 1996թ. նոյեմբերի 15-ի Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորությունների գործով Եվրոպական դատարանի վճիռը (գանգատ թիվ 22414/93), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-103050>:

⁶⁵Տե՛ս 2015 թվականի ապրիլի 4-ի թիվ ՎԴ/6781/05/12 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97974>:

անտեսվել և կոպտորեն խախտվել են նաև վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դրույթներն ըստ որոնց **«1. Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց փարբերական որևէ հիմք: Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես փարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:»⁶⁶:**

ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/6630/05/11 գործով վճռում արտահայտած դիրքորոշման համաձայն՝ **«Վարչարարությունը, հանդիսանալով վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող և ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար իրավական և փաստական հետևանքներ առաջացնող գործունեություն, ուղղակի կապված է օբյեկտիվ ճշմարտության բացահայտման գործընթացի հետ: Իսկ գոյություն ունեցող փաստերի պարզումն ու բացահայտումն առանց վարչական մարմնի օբյեկտիվության և վարչարարության բազմակողմանիության ու լրիվության, չի կարող բավարարել իրավական պետության անքակտելի մաս հանդիսացող՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գերակայության սկզբունքի պահանջներին:**

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ փարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը, ստանալով ապաստանի դիմում, պետք է՝

- հավաքագրի ապաստան հայցողի կամ ցանկացած այլ շահագրգիռ կողմի տրամադրած բոլոր տեղեկությունները,

- ապաստան հայցողի հետ անցկացնի հարցազրույց և ստուգի ներկայացված փյալները,

- պարզի այն հարցը, թե օտարերկրյա քաղաքացի հանդիսացող դիմողն արդյո՞ք ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ ստիպված է լքել

⁶⁶Տե՛ս 2013 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ ՎԴ/5155/05/12 գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վճիռը,

[http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809615938:](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809615938)

իր քաղաքացիության երկիրը համարարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով,

- բացահայտի դիմողի վերադարձելիությանը խոչընդոտող հանգամանքների առկայության հարցը:

Ընդ որում, հաշվի առնելով վարչարարության իրականացման բազմակողմանիության, լրիվության, օբյեկտիվության չափանիշները, հավաստիության կանխավարկածը և վարչական մարմինների փոխօգնության պարտականությունը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը պետք է իրականացնի բոլոր այն գործողությունները, որոնք առավելապես հնարավորություն կտան վերջինիս բացահայտելու վերը շարադրված հանգամանքները: Վարչական մարմինը չի կարող սահմանափակվել զուտ վարույթի մասնակցի ներկայացրած ապացույցներով և պարտավոր է գործադրել միջոցներ վարույթի առարկային առնչվող բոլոր հարցերի, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների, պարզման ապահովման համար: Ընդ որում, քննարկվող հանգամանքների վերաբերյալ որևէ կասկած կամ չհաստատված հանգամանք պետք է գնահատվի դիմողի օգտին: **Միայն նման պայմաններում ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը կարող է կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում:**»⁶⁷:

Ավելին, ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/6630/05/11 գործով վճռում նշել է, որ «(...) վարչական մարմինը պարտավոր է հետևել օրենքների պահպանմանը, որպիսի պահանջի իրագործման համար վերջինս պետք է ապահովի գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա հանգամանքները, որպիսի կանոնն ամբողջությամբ կիրառելի է նաև փախստականների և ապաստանի վարույթի նկատմամբ:»⁶⁸:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Եվրոպական դատարանի և ներպետական դատարանների կողմից արտահայտած դիրքորոշումների

⁶⁷Տե՛ս 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ՎԴ/6630/05/11 գործով ՀՀ վարչական դատարանի վճիռը, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809546737:

⁶⁸Տե՛ս 2016 թվականի հունվարի 22-ի թիվ ՎԴ/1597/05/15 գործով ՀՀ վարչական դատարանի վճիռը, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809881974:

կիրառումը գործնականում կնպաստի ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանության մակարդակի հետագա զարգացմանը, ինչպես նաև Միգրացիոն պետական ծառայության վերաբերելի որոշումների հիմնավորվածության և որակի բարձրացմանը: Սույնով կապահովվի նաև Միգրացիոն պետական ծառայության որոշումների համապատասխանությունը նշված մարմինների ներկայացած դիրքորոշումներին և գնահատականներին:

Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ վերը նշվածը գործնականում ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել Միգրացիոն պետական ծառայության համապատասխան աշխատակիցների՝ վերաբերելի թեմաներով վերապատրաստումներ: Միգրացիոն ոլորտի իրավասու պետական մարմինների աշխատակիցների վերապատրաստման անհրաժեշտությանը անդրադարձ է կատարվում նաև ՄԱԿ ՓԳՀ-ի 2007 թվականի հունվարի 1-ին վերանայված Փախստականի պաշտպանություն և խառը միգրացիա. 10 կետից բաղկացած գործողությունների ծրագրի 3-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Անհրաժեշտ է ապահովել պաշտպանության գործնական երաշխիքներ՝ բացառելու խտրական և ոչ համաչափ միջոցների, ինչպես նաև դրանց արդյունքում վերադարձելիության կիրառմանը: Դրա ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել սահմանապահ զորքերի և միգրացիոն աշխատակիցների վերապատրաստումներ (...):»⁶⁹:*

Ավելին, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1998 թվականի դեկտեմբերի 15-ի Սահմանային անցման կետերում ապաստան հայցող անձանց առաջինը հանդիպող պաշտոնյաների վերապատրաստման վերաբերյալ R(98) 15 հանձնարարականում: Մասնավորապես, դրա 2-րդ կետի համաձայն՝ *«Այն պաշտոնյաները, ովքեր պատասխանատու են ոչ միայն ապաստան հայցողներին ընդունելու, այլ նաև ապաստանի դիմումին ընթացք տալու, ինչպես նաև որոշում կայացնելու համար, (...), նրանց վերապատրաստումները պետք է ուղղված լինեն ձեռք բերելու՝*

2.1 հանձնարարականի 1.1-ից 1.6 ենթակետերում թվարկված գիտելիքները և հմտությունները⁷⁰,

⁶⁹Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի 2007 թվականի հունվարի 1-ին վերանայված Փախստականի պաշտպանություն և խառը միգրացիա. 10 կետից բաղկացած գործողությունների ծրագրի 3-րդ կետի 2-րդ պարբերությունը, <http://www.unhcr.org/4742a30b4.pdf>:

⁷⁰Տե՛ս սույն զեկույցի «Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովումը հատուկ հաստատություններում» գլխի «ՀՀ պետական սահմանի անցման կետերում տեղակայված հատուկ կացարաններ» բաժնում:

2.2 հմտություններ հարցազրույց անցկացնելու, ներառյալ միջանձնային և միջմշակութային հաղորդակցության մասով,

2.3 գիտելիք ապաստան հայցողների ծագման երկրում և համապատասխան երրորդ երկրներում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ,

2.4 հմտություններ ապաստան հայցողների նույնականացման վերաբերյալ,

2.5 գիտելիք անդամ երկրների կողմից «անվտանգ երրորդ երկիր» հասկացության կիրառման վերաբերյալ:»⁷¹:

Եվրոպական միության խորհրդի 2013 թվականի հունիսի 26-ի 2013/32/EU Միջազգային պաշտպանության շնորհման և դադարեցման միասնական ընթացակարգերի վերաբերյալ վերանայված դիրեկտիվում: Մասնավորապես, դրա 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ «Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի բոլոր այն մարմինները, որոնք կարող են ստանալ միջազգային պաշտպանությանն առնչվող դիմումներ, այդ թվում՝ ոստիկանությունը, սահմանապահ զորքերը, **միգրացիայի մարմինները** և քրեակարարական հիմնարկների անձնակազմը, **ունենան համապատասխան տեղեկություն և նրանց անձնակազմը անցնի անհրաժեշտ մակարդակի վերապատրաստումներ, որոնք վերաբերում են իրենց պարտականություններին և լիազորություններին**, ինչպես նաև ուսուցում՝ ինչպես տեղեկացնել դիմումատուներին, թե որտե՞ղ և ինչպե՞ս նրանք կարող են դիմել միջազգային պաշտպանության:»⁷²:

Այսպես, նշվածի հիմքով կարելի է արձանագրել, որ ոլորտի իրավասու միջազգային և ներպետական մարմինների կողմից արտահայտած դիրքորոշումները, ինչպես նաև իրավակարգավորումներն ու առաջարկությունները Միգրացիոն պետական ծառայության որոշումներում արտացոլելու և դրանք այդ չափանիշներին համապատասխանեցնելու

⁷¹Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1998 թվականի դեկտեմբերի 15-ի Սահմանային անցման կետերում ապաստան հայցող անձանց առաջինը հանդիպող պաշտոնյաների վերապատրաստման վերաբերյալ R(98) 15 հանձնարարականի 2-րդ կետը, <http://www.refworld.org/pdfid/3ae6b39d10.pdf>:

⁷²Տե՛ս Եվրոպական միության խորհրդի 2013 թվականի հունիսի 26-ի 2013/32/EU Միջազգային պաշտպանության շնորհման և դադարեցման միասնական ընթացակարգերի վերաբերյալ վերանայված դիրեկտիվի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը, <http://www.refworld.org/docid/51d29b224.html>:

ճանապարհներից է իրավասու աշխատակիցների վերապատրաստումը: Սա թույլ կտա ձեռքբերված գիտելիքները գործնականում կիրառելու միջոցով ապահովել որոշումների համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Ավելին, նշվածը կարող է հանգեցնել նաև Միգրացիոն պետական ծառայության կողմից միատեսակ փաստական հանգամանքներ ունեցող դիմումների վերաբերյալ համանման մոտեցման ապահովմանը:

Ուստի, անհրաժեշտ է կատարել ապաստանի տրամադրման հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների և ՀՀ մյուս դատարանների ակտերի, ինչպես նաև ոլորտի միջազգային կառույցների դիրքորոշումների և առաջարկությունների ուսումնասիրություն: Անհրաժեշտ է կազմակերպել Միգրացիոն պետական ծառայության իրավասու աշխատակիցների՝ դատական պրակտիկայի պահանջների և միջազգային փաստաթղթերով սահմանված դիրքորոշումների կիրառության առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացներ: Դասընթացները հիմնականում կարող են վերաբերել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով սահմանված դիրքորոշումներին, ինչպես նաև կոնկրետ հարցերի վերաբերյալ դատարանի տրամաբանությանը:

Միգրացիոն պետական ծառայության՝ ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել նաև որոշումներ դատական կարգով բողոքարկելու ընթացակարգի վերաբերյալ օրենսդրական պահանջներին առնչվող խնդիրներ: Մասնավորապես, Օրենք 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ապաստան հայցողները և փախստականներն իրավունք ունեն դատական կարգով բողոքարկելու ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված վարչական այլ ընթացակարգերի հետևանքով լիազոր մարմնի կայացրած ցանկացած բացասական որոշում՝ դրա մասին տեղեկանալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում:»:*

Միևնույն ժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանվում է հայց ներկայացնելու ժամկետները: Դրա 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է, որ *«Վիճարկման հայցը դատարան կարող է ներկայացվել երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի մեջ մտնելու պահից:»:* Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Պարտավորեցման*

հայցը դատարան կարող է ներկայացվել երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին իրազեկվելու պահից:»:

Վերը նշված իրավակարգավորումները ակնհայտ հակասում են միմյանց. Օրենքը բողոքարկման համար նախատեսում է **30 օր**, իսկ Վարչական դատավարության օրենսգիրքը՝ **երկամսյա** ժամկետ: Ավելին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին:»: Այս դրույթի ուժով պետք գործի օրենսգրքով՝ դատական բողոքարկման համար նախատեսված երկամսյա ժամկետը: Այնուամենայնիվ, գործնականում Միգրացիոն պետական ծառայության կողմից ընդունված՝ ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշումների մեջ նշվում է, որ այն ուժի մեջ է մտնում դիմումատուին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան որոշման մասին իրազեկման օրվանից սկսած 30 օրվա ընթացքում:

Ապաստանի տրամադրումը մերժելու մասին որոշման, իբրև վարչական ակտի բողոքարկման ժամկետների հետ կապված խնդրի քննարկման շրջանակներում հարկ է անդրադարձ կատարել նաև Ի.Մ. ընդդեմ Ֆրանսիայի գործով 2012 թվականի փետրվարի 2-ի Եվրոպական դատարանի վճռին: Մասնավորապես, դատարանի կողմից ամրագրված դիրքորոշման համաձայն՝ *ապաստանի վերաբերյալ դիմումի արագացված քննությունը չպետք է խոչընդոտի այն ընթացակարգային երաշխիքների ապահովումը, որոնք միտված են չեզոքացնելու ապաստան հայցողի վտարման վերաբերյալ կամայական որոշումների ընդունումը: Բողոքարկման համար նախատեսված չարդարացված կարճ ժամկետը կարող է ազդել նախատեսված այդպիսի միջոցի արդյունավետ իրացմանը*⁷³:

Ուստի, Օրենքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի միջև առկա հակասությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է Օրենքում կատարել փոփոխություն, որով ՀՀ-ում ապաստանի տրամադրումը մերժելու վերաբերյալ Միգրացիոն պետական ծառայության որոշման դատական

⁷³Տե՛ս Ապաստանի ընթացակարգը և արդյունավետ միջոցների կետ 8-ը, http://www.echr.coe.int/Documents/COURTalks_AsyI_Talk_ENG.PDF:

Տե՛ս նաև 2012թ. փետրվարի 2-ի Ի. Մ. ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (գանգատ թիվ 9152/09), <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-108934>:

կարգով բողոքարկման ժամկետը կհամապատասխանեցվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված՝ հայցը դատարան ներկայացնելու ժամկետին: Նշվածը կվերացնի նաև իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները: